

ISSN 1829-1155

Հիմնադիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳԻՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ

**ՍԱՀՄԱՆԱԳԻՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ**

Խմբագրական  
խորհուրդ

Գագիկ Նարոյթյունյան  
Արմեն Նարոյթյունյան  
Վահե Սյրեխանյան  
Վորդյա Նովիանովայան  
Վալերի Դողոբյան  
Ռաֆայել Դադարյան  
Անուշան Նակոբյան

Գլխավոր խմբագիր՝  
Գեհար Աշտունի

Խմբագրության հասցեն՝  
Երևան, Բուդրամյան 10  
Հեռախոս՝ 58-81-71

**ՏԵԴԵԿԱԳԻՐ**

**2(51)  
2009**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## I. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

\* ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ «ՀԱԿԱՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՇՈՒՐՁԸ - Վ. ՊՈՂՈՍՅԱՆ ..... 4

### ԵՐԻՏԱՍԱՐԳ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄՔԻՈՆ

\* ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄՈՂ ՍՈՒԲՅԵԿՏ -  
Ս. ԱՌԱՔԵԼՅԱՆ ..... 9

\* ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՈՐՈՇ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՍԻՆ - Բ. ՂԱԶԻՆՅԱՆ ..... 26

## II. ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (755-764)

\* ՍԳՈ-755. 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՃԱՊՈՆԻԱՅԻ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՇՈՂԵԳԱԶԱՅԻՆ ՑԻԿԼՈՎ  
ԷՆԵՐԳԱԲԼՈՎԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ ARM-P2 ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 35

\* ՍԳՈ-756. 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻՋԵՎ  
ԹՎԻՆԻՆԳ ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 38

\* ՍԳՈ-757. 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2007-2008 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 42

\* ՍԳՈ-758. ԶԱՂԱԶԱՅԻ ՍԵՐԻՆԵ ՖԼՁՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝  
«ՀՀ ԶԱՂԱԶԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ  
80 ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ, 4-ՐԴ ԵՎ 5-ՐԴ ՍԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 46

\* ՍԳՈ-759. 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-ԻՆ՝ ԼՅՈՒՔՍԵՄԲԱՐԳՈՒՄ ԵՎ 2008 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 29-ԻՆ ԵՐԵՎԱՆԻՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԳՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԳՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ  
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 66

\* ՍԳՈ-760. 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՏՀՏ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳԼՈՒԲԱԼ ԱԼՅԱՆՍԻ ՀԵՏ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 70

* ՍԳՈ-761. 2008 թվականի սեպտեմբերի 27-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	73
* ՍԳՈ-762. 1985 թվականի հոկտեմբերի 3-ին ԳՐԱՆԱԴԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՅԱՑԻՄԵՆՏԻՄ (ԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	76
* ՍԳՈ-763. 2006 թվականի նոյեմբերի 17-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԿԻՈՏՈՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ Բ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	80
* ՍԳՈ-764. 2007 թվականի սեպտեմբերի 11-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՅՆՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	83

**III . ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

* ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԿԱՐԳԱՏՈՒԹՅԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ (խորհրդածողով ԼՂՀ-ում) .....	86
* ՆՈՐ ԳՐՔԵՐ, ՇՆՈՐՀԱՆԳԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ .....	87
* ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ .....	90



**Վայերի ՊՈՂՈՍՅԱՆ**

*ՀՀ սահմանադրական դատարանի անդամ*

**ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ  
«ՀԱԿԱՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՇՈՒՐՁԸ**

Սահմանադրությունն ուսումնասիրելիս, հաճախ, անհրաժեշտություն է առաջանում սահմանադրական այս կամ այն դրույթը համեմատել սահմանադրական որեւէ այլ դրույթի (դրույթների) հետ, պարզել դրանց փոխհարաբերակցությունը, մեկը մյուսի հետ շաղկապվածության աստիճանը, փոխարացումը կամ փոխբացառումը եւ այլն: Այսպիսի մոտեցման առնչությամբ կարելի է հանդիպել հետեւյալ հարցադրմանը. արդյո՞ք Սահմանադրության այս կամ այն դրույթը չի հակասում որեւէ այլ դրույթի: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության հոդված 4-ում («Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ինչպես նաեւ հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ») նշված «տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները...անցկացվում են... ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա» դրույթը<sup>1</sup> չի՞ հակասում հոդված 108-ում («Երեւանը համայնք է: Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների ձեւավորման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով: Օրենքով կարող է սահմանվել Երեւանի քաղաքապետի ուղղակի կամ անուղղակի ընտրություն») ամրագրված «օրենքով կարող է սահմանվել...անուղղակի ընտրություն» դրույթին: Կամ արդյո՞ք ՀՀ Սահմանադրության հոդված 30-ի առաջին մասում («Հայաստանի Հանրապետության՝ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու եւ հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաեւ անմիջականորեն եւ կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացու-

1 Ի դեպ, նույն դրույթը այլ ձևակերպմամբ՝ «քաղաքացիներն ունեն...անմիջականորեն եւ կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը եւ տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք» նշված է նաեւ Սահմանադրության հոդված 30-ում:

ցիչների միջոցով պետական կառավարմանը եւ տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք») ամրագրված «քաղաքացիներն ունեն ընտրելու ... միջոցով...տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք» դրույթը չի հակասում այդ նույն հոդվածի երկրորդ մասում («Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին եւ տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը») ամրագրված «օրենքով կարող է սահմանվել ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին...մասնակցելու իրավունքը» դրույթին: Նույն հարցադրումն է առաջանում նաեւ ՀՀ Սահմանադրության հոդված 27.1-ի առումով. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»: Այս դրույթից ակնհայտ է դառնում, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի դիմում ներկայացնել ցանկացած պետական մարմին, ասենք ՀՀ սահմանադրական դատարան, եթե իր կարծիքով վնասվել կամ վտանգվել է իր անձնական կամ հասարակական որեւէ շահ որեւէ օրենքի՝ Սահմանադրությանը չհամապատասխանելու պատճառով: Սակայն, ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետը՝ «Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել՝ յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը», էապես սահմանափակում է մարդու՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավունքը:

Ներկայացված օրինակները ցույց են տալիս, որ անհրաժեշտություն կա իմաստավորել սահմանադրական տարբեր դրույթների միջեւ առկա «անհամապատասխանությունները» եւ ճշգրտել այդ դրույթների՝ առաջին հայացքից թվացող «հակասականությունը»:

Մի պահ ենթադրենք, որ սահմանադրական տարբեր դրույթների միջեւ առկա է որոշակի հակասականություն, այսինքն գործ ունենք իրավական կոլիզիայի հետ: Այս դեպքում հարց է առաջանում, թե ինչպե՞ս կարելի է հաղթահարել այդ կոլիզիան: Հայտնի է, որ օրենքների կոլիզիան՝ միեւնույն հարցին վերաբերող մի քանի գործող նորմատիվ ակտերի հակասականությունը, հաղթահարվում է ավելի մեծ իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի հիման վրա, կամ եթե դրանք ունեն միեւնույն իրավաբանական ուժը, ապա հիմք է ընդունվում ավելի ուշ ընդունված իրավական

**ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

ակտը եւ այլն: Մի շարք դեպքերում այդ հարցի պատասխանը տալիս է հենց Սահմանադրությունը: Այսպես, ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված է, որ «եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը» (հոդված 6): Այլ դեպքերում կոլիզիան կարող է հաղթահարվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում նշված սկզբունքների հիման վրա:

Հետաքրքիր լուծում է տվել այդ հարցին Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը, ըստ որի՝ «Սույն Սահմանադրության մյուս բոլոր դրույթները չեն կարող հակասել Ռուսաստանի Դաշնության սահմանադրական կարգի հիմունքներին» (հոդված 16): Այլ կերպ ասած՝ Ռուսաստանի Սահմանադրությամբ սահմանվել է յուրահատուկ մի սահմանադրություն («Սահմանադրական կարգի հիմունքները» գլուխը) Սահմանադրության մեջ, որն իր իրավական ուժով ավելին է, քան Սահմանադրության մյուս գլուխներում ամրագրված սկզբունքներն ու նորմերը: Այսինքն՝ Սահմանադրության սկզբունքների ու նորմերի սահմանադրականության վերաբերյալ կասկածներ առաջանալիս հնարավոր է ստուգել դրանց անհակասականությունը հիշյալ գլխի սկզբունքների ու նորմերի միջոցով: Չնայած Սահմանադրությամբ այս ճանապարհով կարծես թե լուծվում է Սահմանադրության մեջ հնարավոր հակասությունները հաղթահարելը՝ այնուամենայնիվ, Սահմանադրությունը չի պատասխանում այն հարցին, թե ինչպե՞ս վարվել այն դեպքում, երբ հակասություններ ի հայտ գան հենց «Սահմանադրական կարգի հիմունքներ» գլխում:

Ռուսաստանի Սահմանադրությունն ունի այնպիսի սահմանադրական դրույթներ, որոնց իրավական ուժը մեկը մյուսի համեմատությամբ տարբեր են: Ինչպես արդեն նշեցինք, բարձրագույն իրավաբանական ուժ ունեն Սահմանադրության առաջին գլխի հոդվածները, իսկ դրանց, ինչպես նշում են ռուսաստանյան իրավագետները՝ իրենց ավելի պակաս իրավաբանական ուժով հաջորդում են երկրորդ գլխի («Մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները») դրույթները, որոնք թեև չեն կարող հակասել առաջին գլխի դրույթներին, սակայն հոդված 18-ին համապատասխան՝ որքանով անմիջականորեն գործող իրավունք են, դրանով իսկ որոշում են օրենքների իմաստը, բովանդակությունը եւ կիրառումը, օրենսդիր եւ գործադիր իշխանությունների, տեղական ինքնակառավարման գործունեությունը եւ ապահովվում են արդարադատությամբ: Այս առումով՝ երկրորդ գլխի դրույթներն իրենց իրավաբանական ուժով գերազանցում են Սահմանադրության մյուս գլուխների (բացառությամբ իններորդ գլխի) դրույթներին:

<sup>2</sup> Ств, оphնակ, «Комментарий к Конституции Российской Федерации», 2002, стр. 120, 939.

Ի տարբերություն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության՝ ՀՀ Սահմանադրությունը, ինչպես նաև բազմաթիվ այլ երկրների սահմանադրությունների, չունի որեւէ նորմ, որով սահմանադրական դրույթները տարբերակվեն իրենց իրավաբանական ուժով, եւ այդ հանգամանքն արտահայտված է շատ հստակ. «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ եւ նրա նորմերը գործում են անմիջականորեն» (հոդված 6, մաս 1-ին): Այսինքն՝ սահմանադրական բոլոր դրույթներն ունեն միեւնույն իրավաբանական ուժը, ուստի այդ դրույթներից ցանկացածը չի կարող որեւէ ձեռով հակասել որեւէ այլ դրույթի, ինչպես ասում են, ըստ սահմանման: Հետեւաբար, բոլոր այն օրինակներն, որոնք նշեցինք հոդվածի սկզբում, չեն կարող լինել ներքին հակասություն ցույց տվող օրինակ, եւ դրանք պետք է դիտարկել ոչ թե իբրեւ հակասություններ, այլ միայն միմյանց լրացնող, փոխհամաձայնեցվածություն ապահովող գործոններ: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ կարող ենք ասել, որ վերը բերված առաջին երկու օրինակները ընդամենը ցույց են տալիս, որ ընդհանուր դրույթներն ունեն որոշակի, կոնկրետ դեպքերի համար բացառություններ եւ ցանկացած մեկնաբանում կամ պարզաբանում պետք է ելնի այսպիսի ըմբռնման դիրքերից:

Ինչ վերաբերում է վերը բերված երրորդ օրինակին, ապա կարծում ենք, որ պետք է խոսել ոչ թե 27.1 հոդվածի եւ 101 հոդվածի 6-րդ կետի հակասականության մասին, այլ մտածել, թե ինչպես կարելի է համատեղել ու համադրել սահմանադրական տարբեր դրույթների պահանջները. մասնավորապես այս դեպքում, հավանաբար, օրենսդիրը, դեկավարվելով ՀՀ Սահմանադրության 3 հոդվածի դրույթներով, պետք է համապատասխան օրենքներով պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների եւ պաշտոնատար անձանց պարտականությունների շրջանակը ներառի 27.1 հոդվածի պահանջների կատարումը ապահովող նորմեր: Մյուս կողմից, որքանով ՀՀ Սահմանադրության «նորմերը գործում են անմիջականորեն» (հոդված 6), յուրաքանչյուր պետական եւ տեղական ինքնակառավարման մարմին ու պաշտոնատար անձ պարտավոր է «պատշաճ պատասխան» տալ մարդու դիմումին կամ առաջարկությանը: Չխորանալով «պատշաճ պատասխան» հասկացության բովանդակության մեջ՝ նշենք, որ «պատշաճ պատասխանը» ենթադրում է, առնվազն, դիմումի ըստ էության վերլուծություն, հստակ փաստարկված պատասխան եւ համապատասխան ընթացք:

Ընդհանուր առմամբ, կարծում ենք, որ ցանկացած սահմանադրություն, որի բոլոր սկզբունքներն ու դրույթներն օժտված են մույն իրավաբանական բարձրագույն ուժով, չի կարող ունենալ ներքին հակասականություն, հակառակ պարագայում՝ հարկ կլինի հարցի լուծումը փնտրել սահմանադրությունից դուրս՝ արտասահմանադրական միջոցներով, ասենք քաղաքա-

**ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

կան ճանապարհով, որը կարող է հանգեցնել սահմանադրական փոփոխությունների կամ նոր սահմանադրության ընդունման: Սակայն սկսած այն պահից, երբ ընդունվում են այդ փոփոխությունները, եւ սահմանադրությունը դառնում է գործող արդեն նոր տեքստով, այն նույնպես դառնում է անհակասական, ինչպես եւ նախկինում: Այսինքն՝ կարելի է միանշանակ պնդել, որ ցանկացած սահմանադրություն՝ այնքան ժամանակ, քանի դեռ այն գործող սահմանադրություն է, կոչված է ինքն իրենով հաղթահարել իր անհամաձայնություններն ու դժվարությունները, թվացյալ հակասականությունը, այլ կերպ ասած՝ գործող սահմանադրությունը միշտ ինքնաբավ է, կամ մաթեմատիկական տերմինով ասած՝ օժտված է լրիվությամբ:

Առհասարակ, խոսելով սահմանադրական դրույթների հակասականության մասին՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ խոսքը չի վերաբերում այնպիսի պարզագույն դեպքերի, երբ նույն տեքստում միաժամանակ առկա են ակնհայտորեն միմյանց հակասող դրույթներ ու սկզբունքներ: Որպես կանոն, ցանկացած բանական-տրամաբանական սկզբունքներով կազմված տեքստ չի կարող պարունակել նման տիպի հակասություններ, առավել եւս սահմանադրական տեքստը, որ մինչեւ գործող սահմանադրություն դառնալը ենթարկվում է մասնագիտական մանրամասն վերլուծության: Հետեւաբար կարելի է խոսել միայն այնպիսի հակասությունների մասին, որոնք ոչ թե մակերեսային են եւ, ըստ էության, կարող են ունենալ տեխնիկական բնույթ, այլ այնպիսի հակասությունների մասին, որոնք ունեն խորքային ծագում:

Մովորաբար այդպիսի հակասությունները երեւակվում են, երբ սահմանադրական սկզբունքներն ու դրույթները երկար ժամանակ կիրառվում են հասարակական կյանքում, դրանց հիման վրա ընդունվում են բազմաթիվ օրենքներ, որոնց կիրառման ընթացքում էլ արտահայտվում են իրավական կոլիզիաները:





**ԵՐԻՏԱՍԱՐԳ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲՈՆ**

**Սամվել ԱՌԱՔԵԼՅԱՆ**

*ՀՀ սահմանադրական դատարանի  
աշխատակազմի իրավախորհրդարվական  
ծառայության փորձագիտական-վերլուծական  
բաժնի գլխավոր մասնագետ*

**ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ՝  
ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
ԴԻՄՈՂ ՍՈՒՔՅԵԿՏ**

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք», իսկ 6 հոդվածի 1 և 2-րդ մասերը սահմանում են. «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն:

**Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը:** Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին»:

Հիմնական իրավունքները և ազատությունները ոչ միայն պետությանը պարտավորեցնում են չխախտել այդ իրավունքները և ազատությունները, այլև պետության վրա դնում են մարդու սահմանադրական կարգավիճակն իրավաբանորեն երաշխավորելու ակտիվ (պոզիտիվ) պարտականություն, որը դրսևորվում է օրենսդիր, կառավարչական և դատական գործունեության մեջ, ուղղված է աջակցելու անհատներին գործնականում իրականացնելու իրենց պատկանող իրավունքները և պարտակա-

**ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

նությունները: Հենց իրավունքների և պարտականությունների երաշխավորման պայմաններում է հնարավոր իրացնել Սահմանադրությամբ մոդելավորված սահմանադրական կարգը<sup>1</sup>: Պետությունը սահմանափակված է մարդու հիմնական իրավունքներով և ազատություններով և չի կարող իր հայեցողությամբ վերացնել կամ սահմանափակել դրանք: Հիմնական իրավունքները յուրօրինակ արգելք են, որը ժողովրդավարական հասարակությունում չի կարող հաղթահարվել ոչ օրենսդիր, ոչ գործադիր և ոչ էլ դատական իշխանության սեփական հայեցողությամբ. օրենսդիրը չի կարող ընդունել օրենք առանց դրանց՝ հիմնական իրավունքներին և ազատություններին համապատասխանեցնելու, դատական իշխանությունը չի կարող դատավարության ընթացքում և իր որոշումներում վնասել դրանց, նրա գործառույթն այդ իրավունքների ապահովումն է...<sup>2</sup>:

Այս դրույթների համադրված վերլուծությունը փաստում է, որ՝

1. չկա այլ արժեք, որն ավելի բարձր է, քան մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները,
2. պետության ցանկացած գործունեություն՝ գործողություն, անգործություն, ակտի ընդունում, չի կարող որևէ ձևով նսեմացնել վերոնշյալ արժեքների էությունը և իմաստը,
3. պետությունը պարտավոր է ոչ միայն ձեռնպահ մնալ այդպիսի գործունեություն ծավալելուց, այլև պարտավոր է իր ակտիվ գործունեությամբ ստեղծել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան իրացումն ու պաշտպանությունն ապահովող մեխանիզմներ,
4. վերոնշյալ բոլոր պահանջները նախատեսված են բարձրագույն իրավաբանական ուժով օժտված նորմատիվ իրավական ակտով՝ Սահմանադրությամբ,
5. պետությունը պարտավոր է օրենքներն ընդունել Սահմանադրության բոլոր պահանջների պահպանմամբ, իսկ Սահմանադրությունը հակասելու հիմնավոր կասկածներ առաջանալու դեպքում անհապաղ ստուգել դրանց սահմանադրականությունը, իսկ այդպիսիք հայտնաբերելու դեպքում հնարավորինս արագ փոփոխել և համապատասխանեցնել Սահմանադրությանը:

Այս ամենին հավելելով նաև ՀՀ Սահմանադրության 5 հոդվածով նախատեսված դրույթները, համաձայն որոնց պետական իշխանությունն

1 Комментарий к Конституции Российской Федерации /под ред. В.Д.Зоркин, Л.В.Лазарев. - Москва: «Эксмо», 2009, 1056, ст. 69-70.  
 2 Комментарий к Конституции Российской Федерации /под ред. В.Д.Зоркин, Л.В.Лазарев. - Москва: «Эксмо», 2009, 1056, ст. 73-74.

իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով՝ ակնհայտ է դառնում սահմանադրի կողմից դրված մի հստակ պահանջ. ի թիվս այլ սուբյեկտների բոլոր պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրենց գործունեության ընթացքում պարտավոր են ապահովել Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը:

ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է բազմաթիվ մեխանիզմներ այդ պարտականությունը կատարելու համար՝ իհարկե դրանց առավել մանրամասն կարգավորումը և առանձնահատկությունների սահմանումը թողնելով օրենսդիրին: Պետական ինքնիշխանությունը սահմանափակված է սահմանադրական պարտականություններով, որոնցից հիմնականը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների ճանաչումը, պահպանումը և պաշտպանությունն է<sup>3</sup>:

Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 49 հոդվածի 2-րդ մասի համաձայն Հանրապետության Նախագահը **հետևում է** Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: Հետագա հոդվածներում Սահմանադրությունն առավել մանրամասն է սահմանում Նախագահի լիազորությունները Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության ապահովման ոլորտում: ՀՀ Ազգային ժողովը, կառավարությունը, դատարանները նույնպես կրում են Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունն ապահովելու պարտականություն: Սակայն այս գիտական հոդվածի շրջանակներում մենք նպատակ չենք հետապնդում քննարկման առարկա դարձնել բոլոր պետական մարմինների գործունեությունը, քանզի այն կարող է ուսումնասիրվել միայն առավել խորը և ծավալուն աշխատանքի շրջանակներում:

Այստեղ կփորձենք քննարկման առարկա դարձնել ՀՀ դատարանների դերակատարությունը Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության ապահովման հարցում: Խոսքն առավելապես վերաբերում է դատարանների կողմից Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության ապահովմանը, մասնավորապես՝ սահմա-

3 *И.В. Левакин, Н.С. Серегин, ОТВЕТСТВЕННОСТЬ И ОБЯЗАННОСТИ, ПРАВА И СВОБОДЫ В ДИАЛЕКТИКЕ КОНСТИТУЦИОНАЛИЗМА, Б.С. Ебзеев. ЛИЧНОСТЬ И ГОСУДАРСТВО В РОССИИ: ВЗАИМНАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ И КОНСТИТУЦИОННАЯ ОБЯЗАННОСТЬ. - М.: Норма, 2007. 383 с / ГОСУДАРСТВО И ПРАВО, 2008, N 3, с. 121:*

**ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

նադրական դատարան դիմելու խնդրին՝ որպես այդ պարտականության կատարման միջոցներից մեկը:

Քննարկվող հարցի համատեքստում կցանկանայինք մեջբերել գրականության մեջ արդարացիորեն արտահայտված այն դատողությունը, համաձայն որի **դատարանը հանդես չի գալիս միայն որպես իրավակիրառող**, ներկայիս իրավաբանական պայմաններում այն միանգամայն անբավարար է: **Դատարանն իրավունք ունի կիրառելու օրենքն արդարադատություն իրականացնելու նպատակով, այսինքն իրավունքի փնտրտուքի ընթացքում՝ միևնույն ժամանակ գնահատելով այդ օրենքի համապատասխանությունը Սահմանադրությանը, իրավունքի ընդհանուր սկզբունքներին, միջազգային պայմանագրերին<sup>4</sup>:**

Սահմանադրության 101 հոդվածի համաձայն՝ «Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել՝

- 1) Հանրապետության Նախագահը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 2, 3, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.
- 2) Ազգային ժողովը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3, 5, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.
- 3) պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում.
- 4) կառավարությունը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 6, 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.
- 5) տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների՝ նորմատիվ ակտերի Սահմանադրությանը համապատասխանության հարցով.
- 6) յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը.
- 7) **դատարանները և գլխավոր դատախազը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով.**
- 8) մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով.

4 Экштайн К. Основные права и свободы. По российской Конституции и Европейской конвенции - М.: 2004. - С. 79./ Судебные запросы в Конституционный Суд Российской Федерации, А.В. Чаптыков, [http://www.supcourt.khakasnet.ru/Jurnal/Jur\\_009/06.htm](http://www.supcourt.khakasnet.ru/Jurnal/Jur_009/06.htm):

9) Հանրապետության Նախագահի և պատգամավորության թեկնածուները՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ և 4-րդ կետերի շրջանակներում իրենց առնչվող հարցերով:

Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում»:

Առաջին հայացքից շատ պարզ թվացող սահմանադրական այս դրույթն ինչպես հայրենական, այնպես էլ այլ երկրների և՛ գիտական շրջանակներում, և՛ պրակտիկ աշխատողների մոտ միանգամայն լուրջ ու նույնիսկ իրարամերժ դատողություններ անելու տեղիք է տվել:

Որոշ հեղինակների կողմից «կարող են դիմել» բառակապակցությունը մեկնաբանվում է որպես իրավունք իր իսկ ցանկությամբ ընտրություն կատարելու սահմանադրական դատարան դիմելու և չդիմելու միջև: Նման կարծիքի, որպես կանոն, հակված են նաև սահմանադրական դատարաններից բացի մնացյալ գրեթե բոլոր դատարանների դատավորները:

Որպես կանոն, դա պայմանավորված է լինում ինստիտուցիոնալ կարգավիճակն առավել բարենպաստ վիճակում տեսնելու ցանկությամբ, և, հաճախ, այդ պատճառով նախ նշվում է, որ սահմանադրական դատարան դիմելը բացառապես իրավունք է, որից հետո միայն փորձ է արվում Սահմանադրության որոշակի հոդվածներ վկայակոչելով հիմնավորել իրավունք լինելու հանգամանքը՝ առանց հաշվի առնելու Սահմանադրության էությունը, սահմանադրի կողմից կոնկրետ նորմին տրված իմաստը, դրա՝ Սահմանադրության այլ նորմերի հետ համադրված վերլուծությունը:

Սահմանադրական դատարաններն անհամեմատ նոր դատական մարմին են՝ համեմատած այլ՝ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանների հետ: Բոլոր այն երկրներում, որտեղ ստեղծվել են սահմանադրական դատարաններ, ընդհանուր իրավասության դատարանների կողմից ակնհայտորեն իրականացվել են սահմանադրական դատարաններին ընդդիմանալու փորձեր: Ի սկզբանե դրանք ընկալվում են որպես բարձրագույն դատական ատյան բոլոր գործերով՝ սակայն առանց ստորադաս դատական ատյանների ընդունած դատական ակտերը վերանայելու լիազորության: Այս հիման վրա ընդհանուր իրավասության դատարանները, յուրովի մեկնաբանելով դատարանի և դատավորի անկախության և միայն Սահմանադրությանն ու օրենքներին ենթարկվելու սահմանադրական սկզբունքը, փորձում են մրցակցության մեջ մտնել սահմանադրական դատարանի հետ: Այստեղ է, որ դեռ հստակ չի ընկալվում այն հանգամանքը, որ անիմաստ է մրցել մի մարմնի հետ, որն իրականացնում է միանգամայն այլ գործունեություն, և խնդիր-

**ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

ներն էականորեն տարբերվում են ընդհանուր իրավասության դատարանների առջև դրված խնդիրներից: Հարկ ենք համարում նշել նաև, որ, ինչպես ցույց է տալիս տարբեր երկրների փորձը<sup>5</sup>, նման մրցակցության և ոչ մի դեպքում ընդհանուր իրավասության դատարանները չեն կարողացել հասնել «ցանկալի արդյունքի»:

ՀՀ Սահմանադրության դեպքում եթե մենք էլ փորձենք նման մեկնաբանություն տալ «կարող են դիմել» բառակապակցությանը, ապա, իսկապես, կարող ենք հիմքեր ստեղծել հակասահմանադրական բազմաթիվ իրավիճակների ձևավորման համար: Ցանկացած միտք, դատողություն, մեկնաբանություն արժեք է ստանում միայն և միայն իր հետևանքների հետ միասին վերցված:

Սահմանադրության ցանկացած նորմի իմաստը բացահայտելիս այն պետք է դիտարկվի Սահմանադրության այլ նորմերի իմաստի հետ համադրված, բացահայտվի սահմանադրի կողմից կոնկրետ ինստիտուտի առջև դրված նպատակը, դրա կողմից լուծման ենթակա խնդիրները, ձևերը և մեթոդները, որոնց կիրառմամբ հնարավոր է դառնում լուծել այդ խնդիրները և հասնել վերջնական նպատակին, ու որոնք, միևնույն ժամանակ, չեն հակասի Սահմանադրության էությանն ու իմաստին:

Թերևս, կարծում ենք, որ որևէ մեկի մոտ կասկած չի հարուցում այն, որ ՀՀ Սահմանադրության 49 հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ «Հանրապետության Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը» դրույթն ամրագրում է Նախագահի պարտականությունն իր լիազորությունների շրջանակներում հնարավոր բոլոր միջոցների կիրառմամբ կանխել Սահմանադրության խախտումները, իսկ խախտումներ հայտնաբերվելու դեպքում վերացնել դրանք կամ նպաստել դրանց վերացմանը: Սահմանադրության պահպանմանը հետևելը չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրության կիրառման ընթացքում զուտ դիտորդի դերում հանդես գալ և պարզապես հետևել՝ Սահմանադրությունը պահպանվում է, թե՛ ոչ:

Հանրապետության Նախագահի կողմից Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը հանդիսանում է Սահմանադրության պահպանմանը հետևելու մեխանիզմներից մեկը:

Եթե «կարող է դիմել» բառակապակցությունը 101 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հետ համադրված մեկնաբանենք որպես Նախագահի իրա-

5 Constitutional courts versus supreme courts; **Lech Garlicki**, Judge of the European Court of Human Rights; former judge of the Constitutional Tribunal of Poland. Email: lech.garlicki@echr.coe.int

վունքը որոշելու դիմել սահմանադրական դատարան, թե չդիմել, ապա նման մեկնաբանությունը հակասության մեջ կմտնի 49 հոդվածի իմաստի հետ կամ Նախագահին կազատենք Սահմանադրության պահպանմանը հետևելու պարտականությունից, որը, մեր կարծիքով, միանշանակ հակասահմանադրական իրավիճակ կհանդիսանա: Մարդու իրավունքները համահունչ են ժողովրդավարական կազմակերպված ցանկացած հասարակությանը, և պետությունը, որ հավակնում է կոչվել իրավական պետություն, ոչ թե իրավունք ունի, այլ պարտավոր է իր օրենսդրության մեջ իրավական և այլ միջոցներով նախատեսել և իրապես երաշխավորել այդ իրավունքները, որոնք սահմանադրորեն ամրագրելու շնորհիվ ձեռք են բերում սուբյեկտիվ իրավաբանական իրավունքի հատկանիշ<sup>6</sup>:

Ուստի, գտնում ենք, որ «կարող է դիմել» բառակապակցությունն իր բովանդակության մեջ ներառում է ոչ թե հայեցողություն դիմելու կամ չդիմելու սահմանադրական դատարան, այլ 101 հոդվածով նախատեսված սուբյեկտների համար նախատեսում է անհրաժեշտության դեպքում սահմանադրական դատարան դիմելու **հնարավորություն**: Այսինքն, եթե իրավունքի այլ սուբյեկտները գան եզրահանգման, որ որևէ իրավական ակտ, որի սահմանադրականության գնահատումը վերապահված է սահմանադրական դատարանի իրավասությանը, հակասում է Սահմանադրությանը, հնարավորություն չունեն դիմելու սահմանադրական դատարան: Օրինակ, եթե որևէ մի քրեական գործով, որի շրջանակներում արդարադատություն իրականացնելու իրավասություն ունի դատական կազմը, այսինքն դատարանը, որը կազմված է մի քանի դատավորներից, և այդ կազմի դատավորներից մեկը գա եզրահանգման, որ իրենց վարությամբ գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտի որևէ մի դրույթ հակասում է ՀՀ Սահմանադրությանը, նա իրավասու չէ դիմելու սահմանադրական դատարան: Այդ գործով մեկ դատավորը չի կարող հանդես գալ որպես դատարան, ուստի 101 հոդվածի 7-րդ կետի իմաստով դիմող սուբյեկտ:

Այստեղ, կարծում ենք, պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ ՀՀ Սահմանադրության 101 հոդվածն ընդամենը սահմանում է սուբյեկտների հստակ շրջանակ, որոնք հնարավորություն ունեն սահմանադրական դատարանում որևէ ակտի սահմանադրականության հարց բարձրացնել, բայց այս նորմը չի սահմանում, թե այդ սուբյեկտներից որն է պարտավոր կամ որն իրավունք ունի դիմելու սահմանադրա-

<sup>6</sup> Комментарий к Конституции Российской Федерации /под ред. В.Д. Зоркин, Л.В. Лазарев. - Москва: «Эксмо», 2009, 1056, ст. 68.

**ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

կան դատարան: Այդ հարցն ուղղակիորեն կապված է այդ սուբյեկտներին յուրաքանչյուրի **սահմանադրաիրավական կարգավիճակի** հետ:

Նման «վեճ» առկա է նաև Ռուսաստանի Դաշնության պրակտիկայում: ՌԴ գերագույն դատարանի պլենումի՝ Արդարադատություն իրականացնելիս ՌԴ Սահմանադրության կիրառման որոշ հարցերի վերաբերյալ 31 հոկտեմբերի 1995թ. ընդունած որոշմամբ<sup>7</sup> սահմանվում են որոշ ուղենիշային կանոններ, որոնք կարող են կիրառվել դատարանների կողմից ՌԴ Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունն ապահովելու նպատակով: Վերոնշյալ որոշման 2 կետի **б)** և **в)** կետերը սահմանում են, որ դատարանը գործը լուծելիս անմիջականորեն կիրառում է Սահմանադրությունը, մասնավորապես եթե՝

**б)** դատարանը **գա եզրակացության**, որ դաշնային օրենքը, որը գործել է դեռ ՌԴ Սահմանադրությունն ընդունելուց առաջ, հակասում է վերջինիս.

**в)** դատարանը **գա համոզման**, որ դաշնային օրենքը, որն ընդունվել է ՌԴ Սահմանադրությունն ուժի մեջ մտնելուց հետո, գտնվում է Սահմանադրության համապատասխան դրույթների հետ հակասության մեջ:

Նույն որոշման 3 կետի 1-ին մասը սահմանում է, որ կոնկրետ գործով կիրառված կամ կիրառման ենթակա օրենքի՝ ՌԴ Սահմանադրությանը համապատասխանելու հարցում **առկա անորոշության դեպքում** դատարանը դիմում է սահմանադրական դատարան այդ օրենքի սահմանադրականության հարցով:

Այս կապակցությամբ ՌԴ սահմանադրական դատարանի նախկին փոխնախագահ Տ.Գ.Մորշչակովան, մեկնաբանելով այդ որոշման վերոնշյալ կետերը, գնահատել է դրանք որպես ՌԴ սահմանադրական դատարանի լիազորությունների արհամարհում. նրա կարծիքով հենց «Սահմանադրական դատարանի մասին» ՌԴ օրենքն է պարտադրում դիմել սահմանադրական դատարան նույնիսկ այն դեպքերում, երբ դատարանները ողջամիտ են համարում հարցը լուծելիս սահմանափակվել Սահմանադրության նորմերն անմիջականորեն կիրառելով<sup>8</sup>:

Կարծում ենք, բավականին խնդրահարույց ձևակերպումներ են կիրառվել վերոնշյալ որոշման մեջ, և բազմաթիվ հարցադրումներ մնում են անպատասխան, ինչպիսիք են, օրինակ՝

<sup>7</sup> Պլենումի կողմից 6 փետրվարի 2007թ. № 5 որոշմամբ կատարված փոփոխություններով հանդերձ:  
<sup>8</sup> Научно – практическая конференция «Судебный конституционный контроль в России: уроки, проблемы, перспективы» // Государство и право. 1997. № 5. С. 7 / Судебные запросы в Конституционный Суд Российской Федерации, А.В. Чаптыков, [http://www.supcourt.khakasnet.ru/Jurnal/Jur\\_009/06.htm](http://www.supcourt.khakasnet.ru/Jurnal/Jur_009/06.htm).



1. բովանդակային ի՞նչ տարբերով է եզրակացության գալը տարբերվում համոզման գալուց:
2. դատարանն անորոշության առկայության մասին պետք է եզրակացության, թե՞ համոզման գա:
3. եթե դատարանը գա համոզման (եզրակացության), որ օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը, իսկ հետո այդ դրույթը վիճարկվի սահմանադրական դատարանում, և վերջինս գտնի, որ օրենքը չի հակասում Սահմանադրությանը, ինչպե՞ս պետք է վերականգնվի անձի իրավունքը,
4. եթե, իսկապես, տարբեր դատարաններ գան համոզման (եզրակացության), որ օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը և կիրառեն սահմանադրական դրույթը սեփական մեկնաբանությունների հիման վրա, որոնք կարող են միմյանցից տարբերվել, իսկ սահմանադրական դրույթները, որպես կանոն, առավել լայն անորոշությամբ են օժտված լինում, ինչպե՞ս կարող է նման դեպքում ապահովվել Սահմանադրության միատեսակ կիրառումը երկրի ողջ տարածքում:

ՌԴ գերագույն դատարանի նախագահ Վ.Մ. Լեբեդևը, չհամաձայնելով Սորշչակովայի արտահայտած կարծիքի հետ, նշել է՝

1) քանի որ ՌԴ Սահմանադրությունն այլ դատարանների կողմից սահմանադրական դատարան դիմելու համար չի սահմանում որևէ հատուկ ռեժիմ համեմատած անհատական դիմումների հետ, որոնց դեպքում միշտ անձի իրավունքն է դիմել սահմանադրական դատարան, միանգամայն բնական է, որ այլ դատարանների կողմից սահմանադրական դատարան դիմելն էլ է իրավունք, և ոչ թե պարտականություն,

2) «Սահմանադրական դատարանի մասին» ՌԴ օրենքի երեք փոխկապակցված դրույթների վերլուծությունը, այն է՝ ա) դատարանների պարտականությունը դիմել սահմանադրական դատարան, բ) դիմել այն ժամանակ, երբ դատարանը կգա եզրահանգման, որ օրենքը չի համապատասխանում Սահմանադրությանը և գ) սահմանադրական դատարան դիմելիս գործի վարույթը կասեցնելու պարտականությունը, հիմք է տալիս եզրակացնելու, որ դատարաններն ինքնուրույնաբար չեն կարող գործը լուծել հենվելով անմիջականորեն ՌԴ Սահմանադրության վրա, եթե գտնեն, որ կիրառված կամ կիրառման ենթակա օրենքը հակասում է ՌԴ Սահմանադրությանը,

3) ցանկացած պետական մարմնի կամ պաշտոնատար անձի իրավաության իրավական կարգավորման տրամաբանությունն այնպես է կա-

**ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

ռուցվում, որ այն ընդգծում է տվյալ մարմնի պարտականությունների շրջանակը, այլ ոչ թե այլ մարմինների կամ պաշտոնատար անձանց պարտականությունն այդ մարմնի նկատմամբ<sup>9</sup>:

Այս դիրքորոշումների հետ կապված ևս կցանկանայինք ընդգծել, որ միանգամայն անընդունելի ենք համարում որևէ համեմատություն անցկացնել դատարանի և անձի սահմանադրաիրավական կարգավիճակների միջև. ակնհայտ է, որ առաջինի դեպքում գործում է «օրենքով նախատեսվածից բացի մնացած ամեն ինչ արգելվում է» սկզբունքը, իսկ երկրորդի դեպքում՝ «օրենքով արգելվածից բացի մնացած ամեն ինչ թույլատրվում է» սկզբունքը: Դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը հանգում է նրան, որ դատարանը կոչված է **Սահմանադրության և Սահմանադրությանը համապատասխանող օրենքների** (ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի 2-րդ մաս) հիման վրա իրականացնել արդարադատություն: Իսկ անձի դեպքում եթե օրենքը հակասում է Սահմանադրությանը, անձն իրավունք ունի և ոչ թե պարտավոր է դրա սահմանադրականության հարց բարձրացնել: Եթե անձը դիմում է Սահմանադրության «օգնությանը» որոշակի շահագրգռվածությունից ելնելով, ապա դատարանը **պարտավոր է առաջնորդվել Սահմանադրության պահանջներով՝ առանց որևէ շահագրգռվածության:**

Այնուամենայնիվ, ՌԴ սահմանադրական դատարանն իր՝ 16.06.1998թ. 19-Պ որոշմամբ հստակ պատասխան է տվել քննարկվող հարցին՝ որոշման մեջ արտահայտելով, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումը. «ՌԴ Սահմանադրության 125 հոդվածի 4-րդ մասով նախատեսված այլ դատարանների կողմից կոնկրետ գործով կիրառված կամ կիրառման ենթակա օրենքի սահմանադրականության ստուգման հարցով սահմանադրական դատարան դիմելը, եթե դատարանը օրենքի՝ ՌԴ Սահմանադրությանը հակասելու եզրահանգման է գալիս, չի կարող դիտվել միայն որպես նրա իրավունքը. դատարանը **պարտավոր է դիմել** նման հարցով, որպեսզի ՌԴ Սահմանադրությանը հակասող ակտը սահմանադրորեն սահմանված կարգով զրկվի իրավաբանական ուժից, որը կբացառի նրա հետագա կիրառումը: Դատարանների այդ պարտականությունը բխում է նրանց որպես արդարադատության անկախ մարմիններին տրված սահմանադրական լիազորությունից ապահովելու մարդու իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը՝ ներառյալ նաև օրենքի և դատարանի առջև հավասարությունը, միևնույն

<sup>9</sup> Տե՛ս.: Лебедев В.М. Судебная власть в современной России: проблемы становления и развития. СПб., 2001. С.94-97. // **Судебные запросы в Конституционный Суд Российской Федерации**, А. В. Чаптыков, [http://www.supcourt.khakasnet.ru/Jurnal/Jur\\_009/06.htm](http://www.supcourt.khakasnet.ru/Jurnal/Jur_009/06.htm):

ժամանակ ենթարկվելով ՌԴ Սահմանադրությանն ու ֆեդերատիվ օրենքներին»:

Կարծում ենք, որ սահմանադրության անմիջական գործողության սկզբունքը չի կարող մեկնաբանվել այնպես, որ ցանկացած իրավակիրառող՝ տվյալ դեպքում դատարան, ցանկացած ժամանակ իր համոզմունքների համաձայն կարողանա գնահատել օրենքի սահմանադրականությունը, մեկնաբանել սահմանադրական նորմը և այն դեռ իրավահարաբերությունների կարգավորման հիմքում: Այդ սկզբունքը կիրառելու համար որոշակի պարտադիր պայմաններ պետք է այնուամենայնիվ բավարարվեն, ինչպիսիք են, օրինակ, **օրենսդրական բացի առկայությունը և կասկածի իսպառ բացակայությունը, որ սահմանադրական նորմը չի ընկալվի տարակերպ և չի ձևավորվի դրա կիրառման ոչ միասնական պրակտիկա**<sup>10</sup>:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71 հոդվածի 2-րդ կետի համաձայն «Դատարանները սահմանադրական դատարան դիմելուց առաջ պարտավոր են ... կասեցնել կոնկրետ գործի վարույթը մինչև սահմանադրական դատարանի ընդունած որոշումն ուժի մեջ մտնելը»: Օրենսդրի տված կարգավորման համաձայն դատարաններն իրավասու չեն սահմանադրական դատարան դիմելուն զուգահեռ քննել և ըստ էության որոշում կայացնել՝ հիմնվելով Սահմանադրության նորմերի վրա: Հնարավոր է դառնում հարցի լուծման երկու հնարավոր տարբերակ. դատարանը կամ գործի վարույթը կասեցնում և դիմում է սահմանադրական դատարան կամ, անտեսելով օրենքը և անմիջականորեն կիրառելով սահմանադրական դրույթն, գործի վերաբերյալ ընդունում է որոշում: Այս իրավիճակում դատարանը կանգնում է «ընտրության» առաջ, թե որ տարբերակից օգտվի, եթե, իհարկե, հիմք ընդունենք այն տեսակետը, որ սահմանադրական դատարանի դիմելը դատարանի իրավունքն է և ոչ թե պարտականությունը:

Սակայն կարծում ենք, որ այստեղ որևէ ընտրություն կատարելու հարց չի կարող ծագել, քանզի այդ երկու մեխանիզմներից յուրաքանչյուրը կարող է և պետք է կիրառվի միմյանցից միանգամայն տարբերվող իրավիճակներում: Այստեղ անհրաժեշտ է առավել ամբողջական մոտե-

<sup>10</sup> Նման կիրառման համար պարտադիր կերպով պետք է հաշվի առնվի սահմանադրական դատարանի որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները, որոնք ՀՀ Սահմանադրության պաշտոնական մեկնաբանություններն են, վճռաբեկ դատարանի մեկնաբանությունները, որ նույն տրամաբանությամբ ենթակա են կիրառման ստորադաս դատարանների կողմից, ինչպես նաև միջազգային դատական ատյանների դիրքորոշումները:

**ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

ցում ցուցաբերել «Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան», «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» և «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն» սահմանադրական սահմանումներին:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ապահովելու պարտականությունն իր մեջ ընդգրկում է ոչ միայն դատարանների կողմից պաշտպանության ապահովման, այլ նաև օրենսդրի կողմից այդ իրավունքների բովանդակության մաս կազմող իրավագործությունների շրջանակի հստակեցման և դրանց իրացման իրավական մեխանիզմների սահմանման, ինչպես նաև գործադրի կողմից դրանց իրացման ապահովման պարտականություն:

Մեր իրավակիրառական պրակտիկայում որոշակի խնդիրներ կան «անմիջական գործողություն» հասկացության ընկալման հետ կապված:

Սահմանադրության և դրա նորմերի անմիջական գործողությունը բնութագրական է իրավաիրացման ցանկացած փուլին՝ օրենսդիր, գործադիր և դատական ոլորտներին: Սակայն անհրաժեշտ է տարբերակել նորմերի անմիջական գործողության ապահովման անմիջական կամ միջնորդավորված ձևերը: Շատ հաճախ սահմանադրական նորմերը կյանքի կոչելու համար անհրաժեշտ է, որպեսզի դրանք առավել մանրամասն կարգավորվեն ճյուղային օրենսդրության շրջանակներում, ինչպես նաև անխուսափելի է դառնում իրավունքներ և պարտականություններ կրողների իրավագործությունների հստակ շրջանակի մանրամասնեցումը և սահմանադրական նորմերի իրացման ընթացակարգերի սահմանումը<sup>11</sup>: Օրենսդրի կողմից նման կոնկրետացման դեպքում անթույլատրելի է նահանջը Սահմանադրության տառից և ոգուց, դրանում դրված արժեքային կողմնորոշիչներից, ինչպես նաև սահմանադրական նորմով նախատեսված իրավագործությունների կամ իրավունքներ և պարտականություններ կրողների շրջանակի սահմանափակում: Այսինքն, օրենսդիրը կոնկրետացնում է և սահմանադրական նորմի բովանդակությունը և դրա իրացման ընթացակարգը:

**Իրավունքների և ազատությունների անմիջական գործողության տակ**

<sup>11</sup> Комментарий к Конституции Российской Федерации /под ред. В.Д.Зоркин, Л.В.Лазарев.- Москва: «Эксмо», 2009, 1056, ст. 161.

պետք է հասկանալ բացառիկ իրավական էֆեկտ, յուրաքանչյուր մարդու և քաղաքացու՝ հիմնական համընդհանուր ճանաչված իրավունքների և ազատությունների անօտարելիորեն պատկանելու բարդ իրավիճակ և դրանով պայմանավորված մշտական, անդադար և անմիջական գործող կարգավիճակային-իրավական կապ քաղաքացիական հասարակության, անհատական կամ կոլեկտիվ անդամների, պետության ու նրա հանրային ինստիտուտների միջև, ինչպես նաև նման սահմանադրական ազդեցության ուժով իրավունքը կրողներին համապատասխանող մասնավոր և հանրային սուբյեկտների մշտապես և անմիջականորեն դրսևորվող իրավական պարտականություններ: Միևնույն ժամանակ անմիջականորեն գործող իրավունքներին և ազատություններին համապատասխանում է պետության՝ անմիջական գործողության հատկանիշով օժտված պարտականությունը ճանաչելու, պահպանելու և պաշտպանելու մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները<sup>12</sup>:

Սահմանադրության անմիջական գործողության իմաստը կայանում է նրանում, որ իրավահարաբերության կարգավորման հիմքում դրվի ոչ թե որևէ նորմի ձևակերպման մեխանիկական վերարտադրումը, այլ որ իրավահարաբերությունը կարգավորվի սահմանադրական նորմի իմաստին և տրամաբանությանը համապատասխան:

Օրենսդրական կարգավորումների նպատակն իրավունքների և ազատությունների լիարժեք իրացումն ապահովելն է: Օրենսդիրն օրենսդրական գործունեության արդյունքում օրենքով նախատեսում է ոչ միայն այն իրավական միջոցների ամբողջությունը, որ հնարավորություն կտա անձին անմիջականորեն և արդյունավետորեն օգտվել Սահմանադրությանը ճանաչված ու երաշխավորված իր իրավունքից կամ ազատությունից, այլ նաև այդ միջոցները սահմանելիս հաշվի է առնում Սահմանադրությանը ճանաչված այլ արժեքների պահպանման և պաշտպանության խնդիրը, այլ անձանց իրավունքների և ազատությունների ոտնահարման արգելումը:

Իրավունքների և ազատությունների անմիջական գործողությունը կայանում է նրանում, որ ճանաչվի անձի, հասարակության և պետության միջև որոշակի կապի առկայությունն ու անհատին որոշակի իրավաբանական հնարավորությունների հավաքածուի պատկանելիությունը, այլ ոչ թե օրենսդիր, գործադիր իշխանությանը կամ արդարադատությանն անմիջականորեն պարտադրվի: ...Հիմնական օրենքում մարդու և քաղաքա-

<sup>12</sup> Комментарий к Конституции Российской Федерации /под ред. В.Д.Зоркин, Л.В.Лазарев. - Москва: «Эксмо», 2009, 1056, ст. 184.

**ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

ցու հիմնական իրավունքների ու ազատությունների նորմատիվ ձևավորումը, որպես իրավակարգավորիչ իրավաբանական պահանջներ՝ իր մեջ մարմնավորելով բնական-իրավական և պոզիտիվ սկզբնավորումների միասնությունը, ծնում, կազմավորում և ձևավորում է պետական գործունեությունը՝ առաջին հերթին ենթադրելով դրանց իրացման համար անհրաժեշտ ձևական-իրավական պայմաններ ձևավորելու անհրաժեշտությունը<sup>13</sup> Комментарий к Конституции Российской Федерации (под ред. В.Д.Зоркин, Л.В.Лазарев), Москва, «ЭКСМО» 2009, 1056, ст. 186-187.: Այս պայմանների առկայության դեպքում է, որ հնարավոր է դառնում իրավունքի բովանդակությունը և կիրառման պրակտիկան դարձնել կանխատեսելի, հետևաբար, իրավունքի սուբյեկտի համար իրենց վարքագիծը համապատասխանեցնել առաջին հերթին ՀՀ Սահմանադրության պահանջներին: Օրենսդրական մանրամասնեցման միջոցով է անձը տեղեկանում, թե իրավագործությունների ինչ շրջանակ է Սահմանադրությամբ ճանաչված իրավունքի բովանդակությունը կազմում:

Դատարանների կողմից գործող օրենքի անտեսումը և Սահմանադրության սեփական մեկնաբանությունների հիման վրա գործի լուծումը կարող է հանգեցնել նրան, որ միևնույն իրավունքը տարբեր անձանց համար նախատեսի տարբեր իրավագործությունների շրջանակ, ինչը միարժեքորեն կխախտի ՀՀ Սահմանադրության 14.1. հոդվածի պահանջը, որ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև<sup>14</sup>:

**Այս հիման վրա գտնում ենք, որ Սահմանադրության տեքստի «գերակայության» ապահովումը և «անմիջական» կիրառումը չեն կարող գնահատվել որպես Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության ապահովում:**

ՀՀ Սահմանադրության 91 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն **դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:** Այս նորմից բխում է. որ քանի դեռ օրենքները ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի 2-րդ մասի իմաստով չեն ճանաչվել Սահմանադրությանը հակասող և անվավեր, դատարանները **պարտավոր են առաջ-**

<sup>13</sup> Комментарий к Конституции Российской Федерации /под ред. В.Д.Зоркин, Л.В.Лазарев. - Москва: «ЭКСМО» , 2009, 1056, ст. 186-187.

<sup>14</sup> Մի դատարանի կողմից օրենքի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու համոզման գալը հիմք չէ այլ դատարանների կողմից նման դատողություններ անելու համար, այլ դատարանները պարտավոր չեն այդ դատարանի օրինակով անտեսել օրենքը: Իսկ օրենքի անտեսումը նշանակում է Սահմանադրության նորմը կիրառել մի բովանդակությամբ, որը տարբերվում է օրենքով սահմանադրական նորմին տրված բովանդակությունից: Արդյունքում կստացվի, որ տարբեր անձինք միևնույն իրավիճակում ունեն տարբեր սահմանադրաիրավական կարգավիճակ: Եվ այդ կարգավիճակը կախված է նրանից, թե գործը որ դատարանն է քննում՝ օրենքն անտեսող, թե օրենքը՝ Սահմանադրությանը համապատասխանելու համոզմունք ունեցող դատարանը:

նորոգվել օրենքներով, քանի որ նրանց իրականացրած արդարադատությունը պետք է համապատասխանի օրենքներին:

Դատարանի՝ սահմանադրական դատարան դիմելը որպես իրավունք դիտարկելն առավել խնդրահարույց է դառնում այն ժամանակ, երբ Սահմանադրությանը հակասելու կասկածներ են առաջանում կամ համոզմունք է ձևավորվում ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածով նախատեսված օրենքների վերաբերյալ: ՀՀ Սահմանադրությունը հստակ սահմանում է այն հարցերի շրջանակը, որոնք պետք է պարտադիր կերպով կարգավորվեն ՀՀ օրենքներով: Եթե դատարանը գտնի, որ այդ օրենքները հակասում են կամ դրանց որևէ մի դրույթ հակասում է ՀՀ Սահմանադրությանը, ապա ուղղակի պարտականություն է կրում դրա սահմանադրականության հարց բարձրացնել: Հակառակ պարագայում կստացվի, որ դատարանը ՀՀ Սահմանադրության նորմը մեկնաբանելով իր սեփական կարգավորումն է տալիս, որի սահմանումը սահմանադիրը վերապահել է բացառապես օրենսդրին:

Դատարանի կողմից սահմանադրական դատարան դիմելու ինստիտուտի՝ Հայաստանի Հանրապետությունում գործնական կիրառությանը եթե փորձենք անդրադառնալ, ապա ակնհայտ է դառնում, որ առհասարակ հստակ պատկերացում չկա այդ ինստիտուտի սահմանադրաիրավական կարգավիճակի, սահմանադրի կողմից դրա առջև դրված նպատակի և դրա կողմից լուծման ենթակա խնդիրների, սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում գործնական դերի և նշանակության վերաբերյալ:

Նախկինում գործող բազմաշերտ կարգն օբյեկտիվորեն կարող էր խոչընդոտներ ստեղծել դատարանների կողմից օրենքների սահմանադրականությունն ապահովելու հարցում պատշաճ դերակատարություն ունենալու համար: Սակայն 2005թ. ՀՀ Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունների արդյունքում դատարաններն ստացան անմիջականորեն սահմանադրական դատարան դիմելու հնարավորություն: Այդ հնարավորությունից դատարաններն օգտվել են ընդամենը երկու անգամ՝ Երեւան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի (դատավոր Է. Ավետիսյան)՝ սահմանադրական դատարան ներկայացված դիմումի հիման վրա՝ ««Դատավորի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի (18 հոդվածի նոր խմբագրություն) դրույթների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության

**ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

հարցը որոշելու վերաբերյալ, որտեղ դատարանին **անհանգստացնում էր դատավորի կենսաթոշակի չափը**, և Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ սահմանադրական դատարան ներկայացրած դիմումը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի և 114 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ, որի դատաքննությունը նշանակված է 2009թ. փետրվարի 24-ին:

Այս պրակտիկան ակնհայտորեն ցույց է տալիս, թե դատարանները, որպես կանոն, որ դեպքերում են հակասություն տեսնում ՀՀ Սահմանադրության և օրենքների միջև ու բարձրացնում դրանց սահմանադրականության հարց:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է եզրակացնել, որ՝

1. ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ **«Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը»** դրույթի գործնականում երաշխավորման պարտականությունը, դրված է, ի թիվս այլ պետական մարմինների, նաև դատարանների վրա՝ իրենց իրավասությունների շրջանակներում:

2. Դատարաններն արդարադատություն իրականացնելիս պարտավոր են նաև զնահատել կիրառման ենթակա օրենքի սահմանադրականությունը, իսկ Սահմանադրությանը հակասելու որևէ **հիմնավոր** կասկած առաջանալու դեպքում դիմել սահմանադրական դատարան:

3. Դատարաններն իրավասու չեն օրենսդրի կողմից ընդունված օրենքն արհամարհել սեփական պարկերացումների հիման վրա, քանի որ նրանց վրա դրված է օրենքների համապատասխան արդարադատություն իրականացնելու պարտականություն:

4. Սահմանադրության նորմի անմիջական գործողությունը չի կարող ընկալվել որպես Սահմանադրության որևէ դրույթի ճեակերպման մեխանիզմական վերարտադրություն. այն ենթադրում է իրավահարաբերության կարգավորում Սահմանադրության նորմի իմաստին և տրամաբանությանը համապատասխան, ուստի օրենքով նախատեսված՝ իրավունքի իրացումը կամ սահմանադրական այլ նորմի իրացումն ապահովող իրավական միջոցների և մեխանիզմների՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցը չի կարող սահմանադրական դատարանից բացի այլ դատարանի քննարկման առարկա դառնալ և արդյունքում որոշակի հետևությունների հիման վրա անկատարել:



5. Միայն Սահմանադրության որևէ դրույթի վկայակոչմամբ արդարադատություն իրականացնելու համար անհրաժեշտ է առնվազն երկու պահանջի բավարարում՝

ա) օրենսդրական բացի առկայություն,

բ) կասկածի իսպառ բացակայություն, որ սահմանադրական նորմը չի ընկալվի տարակերպ և չի ձևավորվի դրա կիրառման ոչ միասնական պրակտիկա:

**ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**



**Բագրատ ՂԱԶԻՆՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ փոխտնօրինության, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ,  
ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի  
իրավական փորձաքննությունների ծառայության  
կրպսեր մասնագետ*

**ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ  
ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Իրավաբանական գրականության մեջ վարչապետ է բնորոշվում այն պաշտոնատար անձը, որը գլխավորում է կառավարությունը՝ գործադիր իշխանության բարձրագույն կոլեգիալ մարմինը: Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքում այս ինստիտուտի պաշտոնական անվանումը տարբեր է՝ **նախարարների խորհրդի նախագահ** (Իտալիա), **կառավարության նախագահ** (Իսպանիա, Ռումինիա, Չեխիա), **նախարար-նախագահ** (Բուլղարիա), **դաշնային կանցլեր** (Գերմանիա, Ավստրիա)<sup>1</sup>: Սակայն մեծամասամբ նրան անվանում են պրեմիեր-մինիստր, այսինքն՝ **առաջին նախարար** (ֆրանսերենից թարգմանաբար՝ premier-առաջին)<sup>2</sup>:

Ժամանակակից սահմանադրական զարգացման պայմաններում գործադիր իշխանության կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունները իրենց արտահայտությունն են գտնում պաշտոնատար անձանց ավելի նեղ շրջանակի, անգամ՝ մեկ անձի ձեռքում կառավարական լայն իշխանության կենտրոնացման մեջ: Դա առավել ակնհայտ է հատկապես խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրներում, որտեղ նման պաշտոնատար անձ է վարչապետը, որին վերապահված է լիազո-

<sup>1</sup> Տես՝ *Арутюнян Г.Г., Баглай М.В.* Конституционное право. Энциклопедический словарь. - М.: Изд. "Норма", 2006, էջ 94-95:  
<sup>2</sup> Պատմականորեն վարչապետներին բնորոշել են **primus inter pares** լատինական եզրույթով, որը թարգմանաբար նշանակում է **առաջինը՝ հավասարների մեջ**, որն, ըստ էության արտացոլում է վարչապետի ինստիտուտի հասկացությունը՝ որպես կաբինետի առաջին կամ ամենից ավագ նախարար՝ չվերապահելով նրան գերիշխողի կամ նախագահողի կարգավիճակ, որպիսին հետագայում դարձան ժամանակակից աշխարհի շատ երկրների վարչապետները: Այդ մասին ավելի մանրամասն տես՝ [http://en.wikipedia.org/wiki/Prime\\_minister](http://en.wikipedia.org/wiki/Prime_minister):

րությունների բավականին լայն շրջանակ: Նրա գործառույթների մեջ է մտնում ոչ միայն կառավարության կազմավորումը, այլև պետական քաղաքականության հիմնական ուղղությունների որոշումը, դրա իրականացման ընդհանուր ղեկավարումը, գործադիր իշխանության առանձին մարմինների գործունեության համակարգումը և այլն:

Արտասահմանյան երկրների պետական շինարարության բնագավառում տեղի ունեցող նմանօրինակ զարգացումները որոշ գիտնականների հիմք են տալիս պնդելու, որ վարչապետը նմանօրինակ կառավարման ձև ունեցող երկրներում հանդես է գալիս որպես **պետության, պետական իշխանության և նրա ինստիտուտների շարունակականության և կայունության երաշխավոր**<sup>3</sup>:

Արտասահմանյան վերլուծաբանների դիտարկմամբ գործադիր իշխանության կենտրոնացման գործընթացը մեկ պաշտոնատար անձի ձեռքում շատ հաճախ ուղեկցվում է նաև մյուս իշխանությունների մեկուսացմամբ, ինչպես օրինակ Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում, որտեղ այն ուղեկցվում է նաև այն հիմնարար սահմանադրական արժեքների աղավաղմանը միտված քայլերով, որոնց վրա խարսխված է ողջ ժողովրդավարական հասարակությունը<sup>4</sup>:

Առավել հաճախ նմանօրինակ միտումները մի շարք արտասահմանյան երկրներում կարող են ստանալ օրենսդրական ամրագրում: Օրինակ՝ Հունաստանի Սահմանադրության 82-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ կառավարությունը սահմանում և ուղղորդում է երկրի ընդհանուր քաղաքականությունը՝ Սահմանադրության և օրենքների դրույթներին համապատասխան: Նույն հոդվածի երկրորդ մասը սահմանում է, որ **վարչապետն ապահովում է կառավարության միասնականությունը և ուղղորդում նրա և պետական ապարատի գործունեությունը կառավարության քաղաքականության իրագործմանը՝ օրենքի դրույթների շրջանակներում**: ԳՖՀ Հիմնական օրենքի 65-րդ հոդվածի համաձայն՝ **դաշնային կանցլերը սահմանում է քաղաքականության հիմնական ուղղությունները և պատասխանատվություն կրում դրանց համար**: Նմանօրինակ իրավական կանոնակարգում է սահմանում նաև Իտալիայի Սահմանադրությունը, որի 65-րդ հոդվածի համաձայն՝ **նախարարների խորհրդի նախագահը ղեկավարում է կառավարության ընդհանուր քաղաքականությունը և պատասխանատվություն կրում դրա համար**<sup>5</sup>:

3 Shu` Yves Meny, Andrew Knapp. Government and Politics in Western Europe. - Oxford University Press, London: 1993, էջ 230-231:

4 <http://www.eurozine.com/article/2006-09-27-golub-en.html>:

5 Shu` Енгибарян Р.В. Конституционное развитие в современном мире: Основные тенденции. -М.: Изд. "Норма", 2007, էջ 414-415:

**ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

Արտասահմանյան երկրների սահմանադրական պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ գոյություն ունի նաև հակադիր մոդելը, երբ պետական մեխանիզմի կազմակերպման և գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները կարող են նաև չստանալ օրենսդրական ամրագրում: Սակայն այդ դեպքում նույնպես արտասահմանյան երկրների մեծամասնության համար ընդհանուր միտումները ակտիվորեն զարգացում են ապրում: Այս տեսանկյունից առավել բնորոշ օրինակ է բրիտանական պրակտիկան: Մեծ Բրիտանիայում վարչապետը նշանակում, ազատում և հետ է կանչում կառավարության անդամներին, սահմանում է վերջիններիս իրավասությունների շրջանակը և ղեկավարում նրանց գործունեությունը: Նա է կազմավորում կաբինետը, սահմանում նրա գործունեության կարգը և ձևակերպում նրա որոշումները:

Մեծ Բրիտանիայի վարչապետին վերապահված լիազորությունների ծավալը և նրա ձեռքում կենտրոնացված կառավարական իշխանությունը այնքան լայն են, որ որոշ պետականագետներ նրան կոչում են նաև «**ընտրովի» միապետ**<sup>6</sup>:

Նմանօրինակ միտումները ակնհայտ դարձան նաև վերջին տարիներին, երբ նրա՝ խորհրդարանական նախաձեռնությունները քայքայելուն միտված ջանքերը մինևույն ժամանակ ուղեկցվեցին նաև դատական իշխանության անկախության նվազեցմանը միտված քայլերով: Օրինակ՝ 2003 թվականի «Քրեական դատարավության մասին» ակտը նախատեսում է պարտադիր և նվազագույն պատժատեսակներ, նվազեցնելով դատավորների ինքնուրույնությունը պատժի անհատականացման վերաբերյալ որոշումների ընդունման ժամանակ: Իսկ 2005 թվականին ընդունված «Ահաբեկչության կանխարգելման մասին» ակտը թույլ է տալիս «Home Secretary» կոչվող պաշտոնատար անձին սահմանափակել անձանց ազատությունը ահաբեկչական գործողությունների մեջ ներգրավված լինելու կասկածանքով<sup>7</sup>:

**Ամեն դեպքում, վերոգրյալը թույլ է տալիս եզրահանգել, որ այսպիսի կառավարման ձև ունեցող երկրներում վարչապետը հանդես է գալիս ոչ թե «հավասարների մեջ առաջինի», այլ գործադիր իշխանության լիիրավ քաղաքական ղեկավարի կարգավիճակով, որը որոշիչ դերակատարում ունի պետական քաղաքականության սահմանման հարցում:**

Որոշ սահմանադրագետների կարծիքով վարչապետի իրավական կարգավիճակի սահմանման հարցում որոշիչ նշանակություն ունի ոչ մի-

6 Stu՝ Конституционное право зарубежных стран. Под. ред. проф. М.В. Баглая. - Москва: Издательство "Норма", 2008. էջ 338-339:  
 7 <http://www.eurozine.com/article/2006-09-27-golub-en.html>:

այն պետության կառավարման ձևը, այլև տվյալ երկրում ձևավորված կուսակցական համակարգը: Միակուսակցական կառավարություն ունեցող երկրներում վարչապետն իր ձեռքում է կենտրոնացնում էական ծավալի լիազորություններ, քանի որ նա այնտեղ միաժամանակ հանդես է գալիս նաև որպես իշխող կուսակցության առաջնորդ: Այդ դեպքում վարչապետն ինքնուրույն է սահմանում կառավարության կազմը և գործունեության կարգը, նրա նիստերի օրակարգը, ինչպես նաև ձևակերպում է նիստերի ժամանակ այս կամ այն հարցերի քննարկման արդյունքում ընդունվող որոշումները: Սակայն կոալիցիոն կառավարության առկայության պայմաններում վարչապետի լիազորությունների շրջանակը ոչ միշտ է այդքան լայն: Որպես կանոն, նա ստիպված է լինում կիսել իշխանությունը քաղաքական կոալիցիայում ներկայացված մյուս կուսակցությունների առաջնորդների հետ, ինչը, որոշ դեպքերում, անհնարին է դարձնում վարչապետի կողմից սեփական նախաձեռնությամբ որոշումների ընդունումը<sup>8</sup>:

Անդրադառնալով ՀՀ սահմանադրական պրակտիկային, պետք է նշել, որ 1995թ. խմբագրմամբ ՀՀ Սահմանադրությամբ վարչապետին էին նվիրված մի քանի հոդվածներ, որոնց միջոցով դժվար էր պատկերացում կազմել նրա իրական սահմանադրաիրավական կարգավիճակի վերաբերյալ: Մասնավորապես՝ հիշյալ խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 87-րդ հոդվածի համաձայն՝ **վարչապետը ղեկավարում է կառավարության ընթացիկ գործունեությունը և համակարգում նախարարների աշխատանքը: Վարչապետն ընդունում է որոշումներ: Կառավարության գործունեության կարգով նախատեսված դեպքերում վարչապետի որոշումները ստորագրում են նաև դրանք իրագործող նախարարները:**

2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում նոր խմբագրությամբ է շարադրվել ՀՀ Սահմանադրության 87-րդ հոդվածի առաջին մասը, ըստ որի՝ եթե նախկին խմբագրությամբ ամրագրված էր, որ «**Վարչապետը ղեկավարում է կառավարության ընթացիկ գործունեությունը.....**», ապա ներկայումս դրանից հանվել է «**ընթացիկ**» բառը, ինչի արդյունքում վարչապետը, հանդիսանալով **կառավարության ղեկավար**, ոչ թե ղեկավարում է գործադիր իշխանության բարձրագույն մարմինը, այլ ղեկավարում է նրա «**գործունեությունը**»:

**Մեր կարծիքով, անհրաժեշտ է փոփոխություններ կատարել ՀՀ Սահմանադրության 87-րդ հոդվածի առաջին մասում և այն շարադրել հետևյալ խմբագրմամբ. «Վարչապետը կառավարության ղեկավարն է:**

<sup>8</sup> Այդ մասին ավելի մանրամասն տես՝ *Giovanni Sartori*. Comparative constitutional engineering. - New-York: University Press, 1994, էջ 104-108:

**ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

Նա համակարգում է նախարարների աշխատանքը և վերահսկողություն իրականացնում պետական կառավարման համապատասխան բնագավառներում Հանրապետության կառավարության ծրագրի կատարման նկատմամբ»: Գտնում ենք, որ հիշյալ նորմի նմանօրինակ խմբագրումը էապես կնպաստի վարչապետի ինստիտուտի ինքնուրույնության բարձրացմանը և կհստակեցնի նրա տեղն ու դերը պետական իշխանության մարմինների համակարգում՝ որպես գործադիր իշխանության ղեկավար:

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում նոր խմբագրությամբ է շարադրվել նաև վերոնշյալ հոդվածի երկրորդ մասը: Մասնավորապես՝ եթե նախկին խմբագրմամբ «Վարչապետն ընդունում էր որոշումներ», ապա կատարված փոփոխություններով սահմանվել է, որ «Վարչապետն ընդունում է որոշումներ՝ կառավարության գործունեության կազմակերպմանն առնչվող հարցերով»: Մեր կարծիքով, ՀՀ Սահմանադրության 87-րդ հոդվածի երկրորդ մասում կատարված փոփոխություններն իրենց տրամաբանական ավարտին կհասցվեին, եթե այն շարադրվեր հետևյալ կերպ. «Վարչապետն ընդունում է որոշումներ՝ կառավարության գործունեության կազմակերպմանն առնչվող հարցերով, որոնք ենթակա են կատարման Հանրապետության ամբողջ տարածքում»: Գտնում ենք, որ նմանօրինակ փոփոխության կատարումը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ: Նախ՝ 2002թ. ապրիլի 3-ին ընդունված «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի<sup>9</sup> 80-րդ հոդվածում ամրագրված՝ իրավական ակտերի տարածության մեջ գործողության սկզբունքի համաձայն՝ վարչապետի որոշումները Սահմանադրության, օրենքների, Ազգային Ժողովի որոշումների, Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, կառավարության որոշումների և գերատեսչական իրավական ակտերի հետ իրենց գործողությունը տարածում են Հանրապետության ողջ տարածքի վրա:

Այսպես՝ նույն օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ կառավարություններկայացվող վերոնշյալ ակտերի (բացառությամբ՝ Սահմանադրության և գերատեսչական ակտերի) նախագծերի վերջնական տարբերակները փորձագիտական եզրակացություն ստանալու նպատակով ուղարկվում են ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության: Ի հավելումն վերոնշյալի՝ պետք է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանը, ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ քննության է առնում նաև վարչապետի որոշումների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը: Այստե-

<sup>9</sup> Տես՝ ՀՀ ՊՏ 2002/15 (190), 21.05.02:

դից կարելի է եզրակացնել, որ վերջիններս իրենց իրավաբանական նշանակությամբ նույն շարքին են դասվում թվարկված իրավական ակտերի հետ, որոնց սահմանադրականության վիճարկման հարցով ՀՀ սահմանադրական դատարան կարող են դիմել ոչ միայն Հանրապետության Նախագահը, այլև կառավարությունը<sup>10</sup>:

Խոսելով ՀՀ վարչապետի սահմանադրական կարգավիճակի մասին, պետք է նշել, որ վերջինիս բաղկացուցիչ մասն են կազմում նաև նրա նշանակման և ազատման կարգը սահմանող իրավադրոմերը: Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ սույն հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրություններում մենք անդրադարձ չենք կատարել դրանց, քանի որ արդեն իսկ «Կառավարության կազմավորման մոդելները» վերտառությամբ գիտական հոդվածի շրջանակներում համալիր ուսումնասիրվել է կառավարության կազմավորման ինստիտուտը՝ ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական սահմանադրական պրակտիկայի շրջանակներում՝ բացահայտելով առկա հիմնախնդիրները և ներկայացնելով առաջարկություններ դրանց կատարելագործման ուղիների վերաբերյալ<sup>11</sup>:

Եթե 1995թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունը Հանրապետության Նախագահին վերապահում էր լայն լիազորություններ կառավարության գործունեության կազմակերպման բնագավառում, ինչը շատ հաճախ պրակտիկայում հիմք էր տալիս խոսելու Հանրապետության Նախագահի՝ որպես գործադիր իշխանության կրողի մասին, ապա 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում հստակեցվեց վարչապետի իրավական կարգավիճակը՝ որպես գործադիր իշխանության ղեկավար: Մասնավորապես՝ կառավարության նիստեր հրավիրելու և վարելու լիազորություններն այժմ սահմանադրորեն վերապահվել են վարչապետին, սակայն արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով կառավարության նիստ կարող է հրավիրել և վարել Հանրապետության Նախագահը: Այդ դեպքերում նույնպես որոշումներն ընդունում է կառավարությունը, իսկ ստորագրում՝ ՀՀ վարչապետը:

1995 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի երկրորդ մասը սահմանում էր, որ կառավարության որոշումները ստորագրում էր վարչապետը, վավերացնում՝ Հանրապետության Նախագահը: Դա նշանակում է, որ կառավարության որոշումներն իրավաբանական

<sup>10</sup> Տես՝ 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի առաջին և չորրորդ կետերը:

<sup>11</sup> Տես՝ *Բազմաթիվ Նախնական*. Կառավարության կազմավորման մոդելները (համեմատական-սահմանադրական վերլուծություն), Պետություն և իրավունք, N 1-2 (39-40), Երևան. 2008. էջ 44-50:

**ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

ուժ էին ստանում միայն Հանրապետության Նախագահի վավերացումից հետո: Չնայած այն բանին, որ 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ վերացվեց կառավարության կողմից ընդունվող բոլոր որոշումները վավերացնելու Հանրապետության Նախագահի լիազորությունը, սակայն, ՀՀ Սահմանադրության 88.1-րդ հոդվածում նախատեսված է միայն մեկ բացառություն, ըստ որի՝ Հանրապետության Նախագահը վավերացնում է մարզպետների նշանակման և ազատման մասին կառավարության որոշումները:

**Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 7-րդ կետով ամրագրված իրավանորմն, ըստ որի՝ Հանրապետության Նախագահն իրականացնում է արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը, ինչպես նաև 85-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումն առ այն, որ ՀՀ արտաքին քաղաքականությունը կառավարությունը մշակում և իրականացնում է Հանրապետության Նախագահի հետ համատեղ, գտնում ենք, որ անհրաժեշտ է ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի երկրորդ մասը լրացնել հետևյալ նախադասությամբ. «Հանրապետության Նախագահի կողմից վավերացվում են բացառապես ՀՀ արտաքին քաղաքականությանն առնչվող կառավարության որոշումները»:**

Կարծում ենք, որ նման փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է նաև նրանով, որ Հանրապետության Նախագահը օժտված լինելով կառավարության հետ համատեղ արտաքին քաղաքականության մշակման և իրականացման լիազորությամբ, իրավասու է միայն հրավիրել և վարել կառավարության նիստեր այս բնագավառին առնչվող հարցերով, որոնց ժամանակ քննարկված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են կառավարության կողմից՝ վարչապետի ստորագրությամբ:

Ինչ վերաբերում է կառավարության որոշումների վավերացման վերաբերյալ ներկայիս իրավական կարգավորմանը, ըստ որի՝ Հանրապետության Նախագահը վավերացնում է միայն մարզպետների նշանակման և ազատման մասին կառավարության որոշումները, **մեր կարծիքով այն հակասում է ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի առաջին մասին, քանի որ ՀՀ ներքին քաղաքականության իրականացման իրավասությունը սահմանադրորեն վերապահված է բացառապես ՀՀ կառավարությանը, իսկ մարզպետները, համաձայն ՀՀ Սահմանադրության 88.1-րդ հոդվածի 2-րդ մասի, հանդիսանում են կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացնող և գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը համակարգող՝ բացառությամբ**



օրենքով նախատեսված դեպքերի, պաշտոնատար անձինք: Հետևաբար, գտնում ենք, որ վերոշարադրյալը հիմք է տալիս եզրահանգելու, որ ՀՀ մարզպետների նշանակման և ազատման գործընթացը հանդիսանում է ՀՀ ներքին քաղաքականության իրականացման անքակտելի մասը և նման պարագայում Հանրապետության Նախագահը որևէ կերպ չի կարող իր մասնակցությունը ցուցաբերել կառավարության կողմից այդ հարցերով որոշումների ընդունմանը:

ՀՀ վարչապետի սահմանադրաիրավական կարգավիճակի ուսումնասիրության համատեքստում կարևորություն են ներկայացնում նաև հանրապետական գործադիր որոշ մարմինների ղեկավարների և դրանց տեղակալների պաշտոնի նշանակման և պաշտոնից ազատման վերաբերյալ հարցերը: Մասնավորապես՝ ՀՀ Նախագահի 2007թ. հուլիսի 18-ի «ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» թիվ ՆՀ-174 հրամանագրի 121-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ վարչապետը պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի ղեկավարին, հանրապետական գործադիր մարմնի ղեկավարի տեղակալին՝ խորհրդակցելով համապատասխան հանրապետական գործադիր մարմնի ղեկավարի հետ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններում նշանակվող անձանց, վարչապետի խորհրդականներին, մամուլի քարտուղարին, օգնականներին, ռեֆերենտներին: Հիշյալ հրամանագրի 124-րդ կետը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենին, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, պետական եկամուտների կոմիտեի ղեկավարներին, ոստիկանության պետին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ:

Նույն հրամանագրի մեկ այլ՝ 125-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի, ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ: Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալին պաշ-

**ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

տոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ պետական կառավարման մարմնի ղեկավարի առաջարկությամբ:

**Մեր կարծիքով ՀՀ վարչապետի՝ այս հարցերին առնչվող լիազորությունների շրջանակը վերանայման կարիք ունի, քանի որ վերջինս, հանդիսանալով Հանրապետության ներքին քաղաքականության իրականացման պատասխանատու պաշտոնատար անձ, մի շարք դեպքերում չի կարող ինքնուրույն պաշտոնի նշանակել և պաշտոնից ազատել այդ բնագավառի հետ սերտորեն առնչվող հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին կամ նրանց տեղակալներին: Գտնում ենք, որ գործադիր իշխանության ղեկավարին այս բնագավառում անհրաժեշտ է տրամադրել գործառնելու ավելի մեծ «տարածք», ինչը կբարձրացնի գործադիր իշխանության ղեկավարման արդյունավետությունը, և կնպաստի թե՛ նրա, և թե՛ հանրապետական գործադիր մարմինների ղեկավարների պատասխանատվության բարձրացմանը իրենց պարտականությունների կատարման նկատմամբ:**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԲԱՆԿԻ  
ՄԻՋԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՇՈՔԵԳԱԶԱՅԻՆ ՑԻԿԼՈՎ  
ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ ARM-P2 ՎԱՐԿԱՅԻՆ  
ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**6 հունիսի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Ա. Մովսիսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի մայիսի 27-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Միջազգային համագործակցության ճապոնիայի բանկի միջեւ Երևանի համակցված շոքեգագային ցիկլով էներգաբլոկի նա-

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(51)2009  
35

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

խազժի համար ARM-P2 վարկային համաձայնագրում փոփոխություն կատարելու մասին» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է ՀՀ սահմանադրական դատարան:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2008թ. մայիսի 27-ին: Համաձայնագրի նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության տնտեսական կայունացմանն ու զարգացմանը:

2. Սույն համաձայնագրով Երեւանի համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի նախագծի իրականացման համար Ճապոնիայի միջազգային համագործակցության բանկը 10 մլրդ 491 մլն (տասը միլիարդ չորս հարյուր ինսունմեկ միլիոն) ճապոնական իենով վարկ է տրամադրելու Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

3. Սույն համաձայնագրով փոփոխություններ են կատարվել 2005թ. մարտի 29-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Միջազգային համագործակցության Ճապոնիայի բանկի միջեւ Երեւանի համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի նախագծի համար ARM-P2 վարկային համաձայնագրում (մայր համաձայնագիր), որը Հայաստանի Հանրապետությունում վավերացվել է 2005թ. մայիսի 26-ին՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Ն-2003-3 որոշմամբ (ՍԴՈ-565): Այդ փոփոխությունները վերաբերում են ֆինանսական միջոցների տարեկան պահանջարկի նախահաշվի ձեւին, վարկի միջոցների բաշխմանը, ինչպես նաեւ այն ոլորտներին, որոնց համար չի թույլատրվում ֆինանսավորում կատարել:

4. Սույն համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

ա) վերադարձնել վարկի հիմնական գումարը, ինչպես նաեւ վճարել տոկոսագումարները սույն համաձայնագրով սահմանված ժամանակացույցին համապատասխան,

բ) Նախագիծն ավարտին հասցնել մինչեւ 2012 թվականի մայիսը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատա-

րանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2008 թվականի մայիսի 27-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Միջազգային համագործակցության Ճապոնիայի բանկի միջեւ Երեւանի համակցված շոգեզագային ցիկլով էներգաբլոկի նախագծի համար ARM-P2 վարկային համաձայնագրում փոփոխություն կատարելու մասին» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**6 հունիսի 2008 թվականի  
ՍԳ-Ո-755**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻՋԵՎ ԹՎԻՆԻՆԳ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**10 հունիսի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Ջ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի փետրվարի 14-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջեւ Թվինինգ ծրագրերի ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց** .

Համաձայնագիրն ստորագրվել է 2008 թվականի փետրվարի 14-ին Գործընկերության եւ համագործակցության համաձայնագրի եւ Եվրոպական հարեւանության քաղաքականության իրականացմանը խթանելու համար Եվրոպական միության անդամ պետությունների եւ Հայաստանի Հանրապետության համապատասխան գերատեսչությունների միջեւ Թվինինգ ձեւաչափով 3 կամ 4 ծրագրերի իրականացմանն աջակցելու նպատակով:

Թվինինգ ծրագրի շրջանակներում նախատեսվում է աջակցել Հայաստանին՝ ժողովրդավարական կառույցների հզորացման, օրենքի իշխանության ամրապնդման, ներառյալ դատախրավական համակարգի բարեփոխումները եւ խաբեությունների ու կոռուպցիայի դեմ պայքարը, մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության ամրապնդման, էներգետիկ ռազմավարության մշակման, ներառյալ Մեծամորի ատոմակայանի հնարավորինս շուտ փակումը, եւ այլ հարցերում:

Ըստ համաձայնագրի՝ Եվրոպական համայնքների հանձնաժողովը Ծրագրի իրականացման համար պարտավորվում է, համաձայնագրում եւ դրա անբաժանելի մասը հանդիսացող երկու հավելվածներում նախատեսված պայմաններով, Հայաստանի Հանրապետությանը տրամադրել հինգ միլիոն (5.000.000) եվրո:

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, այդ թվում.

- համաձայնագրի իրականացման գործընթացին վերաբերող ամբողջ տեղեկատվության փոխանակումն իրականացնել գրավոր,
- ֆինանսավորման համաձայնագրի իրագործմանն ուղղված բոլոր պայմանագրերը կնքել եւ իրականացնել արտաքին գործառույթների իրականացման համար Հանձնաժողովի կողմից սահմանված եւ հրատարակված այն ընթացակարգերի եւ փաստաթղթերի համաձայն, որոնք ուժի մեջ են ընթացակարգերն սկսելու ժամանակ,
- համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա ընթացքում, այսինքն՝ համաձայնագիրը վերջին Կողմի ստորագրելուց հետո երեք տարվա ընթացքում, ստորագրել համաձայնագրի իրականացմանն ուղղված պայմանագրերը,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- պայմանագրի բնույթից ելնելով՝ երաշխավորել այն ֆիզիկական եւ իրավաբանական անձանց Հայաստանի Հանրապետությունում հիմնավորվելու եւ բնակվելու ժամանակավոր իրավունքը, որոնք մասնակցում են աշխատանքների, մատակարարման կամ ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման համար հայտարարված մրցույթներին, ինչպես նաեւ ապահովել, որպեսզի կապալառուները (ներառյալ՝ դրամաշնորհ ստացողները), ֆիզիկական անձինք, որոնց ծառայությունները պարտադիր են պայմանագրի իրականացման համար, եւ վերջիններիս ընտանիքների անդամները Ծրագրի իրականացման ընթացքում օգտվեն նույն իրավունքից,
- Համայնքի կողմից ֆինանսավորվող գնումների պայմանագրերի եւ դրամաշնորհների նկատմամբ կիրառել ամենաբարենպաստ հարկային եւ մաքսային այն պայմանները, որոնք ՀՀ-ն կիրառում է այն պետությունների կամ զարգացման միջազգային կազմակերպությունների նկատմամբ, որոնց հետ ունի հարաբերություններ, իսկ նշված խնդրի վերաբերյալ Շրջանակային համաձայնագրով կամ նախկազրության մասնաված ավելի մանրամասն դրույթների առկայության պարագայում կիրառել նաեւ դրանք,
- ձեռնարկել համապատասխան միջոցներ անհամապատասխանությունները եւ խարդախությունը կանխելու ուղղությամբ եւ Հանձնաժողովի կողմից պահանջ ներկայացնելու դեպքում քրեական հետապնդում իրականացնել՝ անօրինական ծախսված միջոցները վերականգնելու համար, ինչպես նաեւ Հանձնաժողովին տեղեկացնել ձեռնարկված ցանկացած միջոցի մասին,
- անմիջապես Հանձնաժողովին տեղեկացնել անհամապատասխանությունների կամ կեղծիքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ունեցած կասկածի մասին,
- ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները պայմանագրերի կամ դրամաշնորհների տրամադրման կամ վերջինիս հետ կապված պայմանագրերի իրականացման ընթացքում ակտիվ կամ պասիվ կոռուպցիայի ցանկացած փորձ վերացնելու համար,
- Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակին, Համայնքի օրենսդրությամբ ամրագրված ընթացակարգերին համապատասխան, տեղում ստուգումներ եւ հսկողություն իրականացնելու հնարավորություն տրամադրել՝ Եվրոպական համայնքների ֆինանսական շահերը խարդախությունից եւ այլ անհամապատասխանություններից պաշտպանելու նպատակով,
- Հանձնաժողովի, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրա-



սենյակի եւ Աուդիտորների եվրոպական դատարանի պաշտոնյաներին եւ վերջիններիս կողմից լիազորված գործակալներին թույլատրել մուտք գործել եւ ուսումնասիրել այն վայրերը եւ շինությունները, որտեղ, համաձայնագրի համաձայն, իրականացվում են համաձայնագրի ներքո ֆինանսավորվող գործողություններ, ներառյալ այդ շինությունների համակարգչային համակարգերը, այդ թվում գործողությունների տեխնիկական եւ ֆինանսական կառավարմանը վերաբերող ցանկացած փաստաթուղթ կամ էլեկտրոնային տվյալ, ինչպես նաեւ ձեռնարկել բոլոր միջոցները վերջիններիս աշխատանքն ավելի դյուրին դարձնելու ուղղությամբ, Հանձնաժողովին, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակին եւ Աուդիտորների եվրոպական դատարանին տեղեկացնել այդ փաստաթղթերի գտնվելու ստույգ տեղի մասին,

- ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են միջնորդ դատավորների կայացրած որոշումն իրականացնելու համար, եւ այլն:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2008 թվականի փետրվարի 14-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջեւ Թվինինգ ծրագրերի ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**10 հունիսի 2008 թվականի  
ՍԳՈ- 756**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2007-2008 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**13 հունիսի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում քննեց «2008 թվականի մայիսի 16-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջեւ 2007-2008 թվականների ֆինանսական համագործակցության մասին համաձայնագրում ամ-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԿՈՒԹՅՈՒՆ ♦ 2(51)2009  
42

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

րագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը՝ նուտքագրված 2008 թվականի հունիսի 9-ին:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. Սույն համաձայնագիրն ստորագրվել է 2008 թվականի մայիսի 16-ին Երեւանում՝ Կողմերի միջեւ բարեկամական հարաբերությունները գործընկերային ֆինանսական համագործակցության միջոցով ամրապնդելու եւ խորացնելու եւ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստելու նպատակով:

2. Համաձայնագրով ԳԴՀ կառավարությունը ՀՀ կառավարությանը կամ երկու կառավարությունների կողմից համատեղ ընտրվելիք այլ վարկառուներին հնարավորություն է ընձեռում մինչեւ 2015թ. դեկտեմբերի 31-ը Վերականգնման վարկերի բանկից (այսուհետ՝ Բանկ: ստանալ.

1) մինչեւ 8,5 մլն եվրո գումարի չափով վարկ՝ հետեւյալ ծրագրերի համար. ա) «Բնակարանային ֆինանսավորման շուկա (Հիպոթեքային շուկա)» ծրագրին՝ մինչեւ 6 մլն եվրո գումար,

բ) «Հիդրոէլեկտրակայանների «Որոտան» կասկադ (խառը ֆինանսավորում) ծրագրին՝ մինչեւ 2,5 մլն եվրո գումար,

2) ֆինանսական օժանդակություններ՝ հետեւյալ ծրագրի իրականացման եւ հսկողության համար անհրաժեշտ հարակից միջոցառումներին.

«Համայնքային ենթակառուցվածքների վերականգնում II (ՀԵԾ II) - հարակից միջոցառումներ» ծրագրին՝ մինչեւ 1 մլն եվրո գումարի չափով:

3. Համաձայնագրով ֆինանսավարկային հատկացումներ են նախատեսված նաեւ հետեւյալ ծրագրերի համար.

ա) «Հիդրոէլեկտրակայանների «Որոտան» կասկադ (խառը ֆինանսավորում) ծրագրին՝ մինչեւ 14,5 մլն եվրոյի չափով գումար (վերածրագրավորում «2005թ. Լոռիքերդի հիդրոէլեկտրակայանի համար նախատեսված 12 մլն եվրոյի չափով հատուկ հատկացումից),

բ) «Հայաստանում «Պրո Կրեդիտ» բանկի հիմնադրման աջակցություն» ծրագրի շրջանակում իրականացվելիք ուսումնավերապատրաստական միջոցառումների համար՝ 500 հազ. եվրոյի չափով գումար:

Ուսումնավերապատրաստական ծրագրերում ներգրավված մասնա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

գետների համար գործելու են ինչպես սույն համաձայնագրի, այնպես էլ ԳԴՀ կառավարության եւ ՀՀ կառավարության միջեւ 1998թ. հուլիսի 27-ին կնքված Տեխնիկական համագործակցության մասին համաձայնագրի պայմանները:

4. Համաձայնագրով ԳԴՀ կառավարությունը ՀՀ կառավարությանը կամ երկու կառավարությունների կողմից համատեղ ընտրվելիք այլ վարկառուներին հնարավորություն է ընձեռում նաեւ «Կովկասյան նախաձեռնության» շրջանակում Բանկից ստանալ հետեւյալ գումարները.

- ա) «Տուբերկուլյոզի դեմ պայքարի» տարածաշրջանային ծրագիրը 2008-2009թթ. շարունակելու համար՝ մինչեւ 1 մլն եվրոյի չափով գումար,
- բ) ««Գյումրի 2» բարձրավոլտ էլեկտրակայանի վերականգնում» ծրագրի համար՝ մինչեւ 14,6 մլն եվրոյի չափով գումար,
- գ) «Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման բարձրավոլտ գծի կառուցում» ծրագրի համար՝ մինչեւ 20,4 մլն եվրոյի չափով գումար:

5. Ըստ համաձայնագրի՝ ՀՀ կառավարությանը նաեւ հնարավորություն է ընձեռվում Բանկից ստանալ ֆինանսական օժանդակության չափին համարժեք վարկ:

Ֆինանսական օժանդակության միջոցները կփոխակերպվեն վարկի նաեւ այն դեպքում, եթե դրանք չօգտագործվեն ըստ նպատակի, կամ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ փոխարինվեն այլ ծրագրերով, բացառությամբ համաձայնագրով նախատեսված ոլորտներին առնչվող ծրագրերի:

6. Գումարների օգտագործումը, դրանց հատկացման պայմանները, ինչպես նաեւ հանձնարարականների բաժանման կարգը սահմանվում են Բանկի եւ վարկառուների միջեւ կնքվելիք պայմանագրերով, որոնք հիմնված են ԳԴՀ-ում գործող իրավական նորմերի վրա:

7. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է.

- եթե վարկառուն ՀՀ կառավարությունը չէ, ապա վերջինս երաշխավորում է Բանկի օգտին վճարումները եվրոյով՝ համաձայն կնքվելիք պայմանագրերով վարկառուների ստանձնած պարտավորությունների, ինչպես նաեւ պարտքի վերադարձման պահանջները,
- համաձայնագրի շրջանակներում Բանկին եւ նրա կողմից ֆինանսավորվող հասցեատերերի առաքումներն ու ծառայությունների մատուցումն ազատել բոլոր հարկերից եւ տուրքերից,
- ապահովել ԳԴՀ-ում գործող փոխադրող ձեռնարկությունների իրավահավասար մասնակցությունը ֆինանսական օժանդակություններ

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

րի կամ վարկերի տրամադրումից բխող փոխադրումների իրականացմանը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, այդ ձեռնարկություններին տալ արտոնող թույլտվություններ:

8. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ բխում են միջպետական հարաբերությունների հաստատման եւ զարգացման վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 9 հոդվածում ամրագրված սկզբունքներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2008 թվականի մայիսի 16-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2007-2008 թվականների ֆինանսական համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**13 հունիսի 2008 թվականի  
ՍԳՈ- 757**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ՍԵՐԻՆԵ ՖԼՋՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
«ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 80 ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ,  
4-ՐԴ ԵՎ 5-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**9 սեպտեմբերի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ քաղաքացի Ս. Ֆլջյանի ներկայացուցիչ Կ. Մեծլումյանի, պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Սերինե Ֆլջյանի դիմումի հիման վրա՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80 հոդվածի 1-ին, 4-րդ եւ 5-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(51)2009  
46

Գործի քննության առիքը քաղաքացի Ս. Ֆլջյանի՝ 14.05.2008թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով վեճի առարկա օրենքը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել է 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որը վիճարկում է դիմողը, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի նոյեմբերի 28-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել է 2007 թվականի դեկտեմբերի 20-ին եւ ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 72 հոդվածով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը լրացվել է 3.2 (վճիռների եւ որոշումների վերանայումը նոր հանգամանքներով) բաժնով: Միաժամանակ, նշված օրենքի 76 հոդվածով ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5.1 (վճիռների եւ որոշումների վերանայումը նոր հանգամանքներով) բաժինը: Նշված 3.2 բաժնի հոդվածները սահմանում են նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու իրավասու դատարանը, դատական ակտի վերանայման հիմքերը, վերանայման ենթակա դատական ակտերի շրջանակը, վերանայման խնդրանք ներկայացնելու կարգը:

2. Քննության առարկա գործի քաղաքացիական հայցի շրջանակներում դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ դիմողը 29.12.2007թ. հավատարմագրված փաստաբանի միջոցով դիմել է ՀՀ վճռաբեկ դատարան՝ խնդրելով ՀՀ սահմանադրական դատարանի 09.04.2007թ. ՍԴՈ-690 որոշման հիման վրա վերանայել վճռաբեկ դատարանի 30.11.2007թ. որոշումը: Վճռաբեկ դատարանը 22.01.2008թ. թիվ 3-95/ՎԳ/2008թ. որոշմամբ՝ կիրառելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80 հոդվածը, անհրաժեշտ է համարել՝ «ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.09.2006թ.

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

վճռի դեմ Սերինե Ֆլջյանի վճռաբեկ բողոքը փոխանցել Երևանի քաղաքացիական դատարան»:

Երևանի քաղաքացիական դատարանը, կիրառելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80 հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասը, 204.20 հոդվածի 2-րդ մասը, 204.25 հոդվածը, որոշել է Սերինե Ֆլջյանի դիմումի հիման վրա նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթի հարուցումը մերժել՝ այն պատճառաբանությամբ, որ դիմող Սերինե Ֆլջյանը խնդրել է նոր հանգամանքներով վերանայել ոչ թե առաջին ատյանի դատարանի դատական ակտը, այլ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը, այն դեպքում, երբ, ըստ Երևանի քաղաքացիական դատարանի՝ նոր հանգամանքներով վերանայման ենթակա են առաջին ատյանի դատարանների դատական ակտերը:

3. Վիճարկելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի 1-ին, 4-րդ եւ 5-րդ մասերի, ինչպես նաեւ վերջիններիս հետ համակարգային առումով փոխկապակցված եւ նույն օրենքի 72 հոդվածում ներառված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 2-րդ մասի, 204.26 եւ 204.29 հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի դրույթների սահմանադրականությունը, դիմողը գտնում է, որ այդ նորմերը հակասում են ՀՀ Սահմանադրության 6, 18, 19 եւ 42 հոդվածներին:

Ըստ դիմողի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթների եւ ՀՀ Սահմանադրության 18, 19 հոդվածների միջեւ հակասությունը դրսևորվում է նրանում, որ այդ դրույթները բացառում են նոր երեսան եկած կամ նոր հանգամանքների հիմքով վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների դատական ակտերի վերանայման հնարավորությունը եւ ըստ այդմ՝ անձի խախտված իրավունքների վերականգնման հնարավորությունը: Ավելին, «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերը հակասում են նաեւ ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի պահանջներին, քանի որ դրանք հետադարձ ուժ են հաղորդել անձի վիճակը վատթարացնող իրավակարգավորմանը: Նույն հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը վիճարկվում է այն հիմքով, որ այն ընդունվել է ի խախտումն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջների:

Ըստ դիմողի՝ թեւ սահմանադրական դատարանն իր որոշումներում



արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխությունները պետք է կատարվեն այնպես, որ արդյունքում անձինք չգրկվեն օրենքով նախատեսված նախկին կարգով սկսված եւ դեռեւս չավարտված իրավակարգավորման գործընթացի պայմաններում իրենց սահմանադրական իրավունքներն արդյունավետ պաշտպանելու լիարժեք հնարավորությունից, սակայն, ըստ դիմողի՝ պատասխանող ՀՀ Ազգային ժողովը շարունակում է ընդունել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի փոփոխություններ, որոնց արդյունքում, փաստորեն, անձինք գրկվում են այդ իրավունքները պաշտպանելու հնարավորությունից:

4. Պատասխանող ներկայացուցչի պնդմամբ՝ ՀՀ դատական օրենսգրքի 26, 47 հոդվածներում եւ 50 հոդվածի 7-րդ մասում ամրագրված դրույթների, ինչպես նաեւ այդ դրույթների հետ թղթակցող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219 եւ 239 հոդվածների համադրական վերլուծությունից բխում է, որ անձը չի գրկվել նոր հանգամանքներով կամ նոր երեսան եկած հանգամանքներով գործը վերանայելու համար դիմումը ներկայացնելու իրավունքից կամ չի սահմանափակվել նրա այդ իրավունքը, այսինքն՝ անձը չի գրկվել իր խախտված իրավունքները վերականգնելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքից (ՀՀ Սահմանադրության 19 հոդված), ինչպես նաեւ չի գրկվել իր իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքից (ՀՀ Սահմանադրության 18 հոդված):

Ըստ պատասխանող կողմի՝ դատական պաշտպանության արդյունավետության գնահատման բաղկացուցիչ մաս կարող է դիտվել նաեւ այն գործոնը, որի համաձայն՝ նոր հանգամանքներով կամ նոր երեսան եկած հանգամանքներով գործը քննվում է ըստ էության, քանի որ այդ հանգամանքների ուժով կարող է ըստ էության փոփոխվել նախկինում կայացված դատական ակտը: Միեւնույն ժամանակ, անձի իրավական վիճակը չի վատթարացել, այլ ապահովվել է «սկզբից մինչեւ վերջ» սկզբունքով դատական պաշտպանության արդյունավետ միջոցների կիրառման կառուցակարգ:

Պատասխանող կողմի կարծիքով՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի վիճարկվող 80 հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերով կարգավորվել են օրենքով նախատեսված նախկին կարգով սկսված եւ դեռեւս չավարտված գործընթացի պայմաններում անձանց սահմանադրական իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները, հետեւաբար, նորմատիվ

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

այդ դրույթները նպատակ ունեն ոչ թե սահմանափակել քաղաքացիադատավարական հարաբերությունների ընթացքում անձանց իրավունքները, այլ կարգավորել դրանք իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները, ինչը չի նշանակում, որ սահմանափակվել է անձանց սահմանադրական իրավունքը:

5. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածը սահմանում է.

«Հոդված 80. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 1-ից:
2. Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը բողոքարկված դատական ակտերի նկատմամբ սույն օրենքով նախատեսված կանոնները կիրառելի չեն:
3. Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործին մասնակից չդարձված անձանց ներկայացված բողոքները դատարանի որոշմամբ փոխանցվում են վերաքննիչ քաղաքացիական դատարան:
4. Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը նոր երեւան եկած հանգամանքներով ներկայացված վճռաբեկ բողոքները դատարանի որոշմամբ փոխանցվում են համապատասխան դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարան:
5. Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը նոր հանգամանքներով ներկայացված վճռաբեկ բողոքները դատարանի որոշմամբ փոխանցվում են համապատասխան դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարան:
6. Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը առաջին ատյանի եւ տնտեսական դատարանում առկա հայցադիմումները եւ հարուցված դատական գործերը դատարանի որոշմամբ փոխանցվում են համապատասխան դատարան՝ սույն օրենքով սահմանված տարածքային եւ առարկայական ընդդատության պահանջներին համապատասխան»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Նոր հանգամանքներով վերանայման ենթակա են առաջին ատյանի դատարանների դատական ակտերը»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.26 հոդվածը սահմանում է. «Նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու իրավասություն ունի համապատասխան դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարանը»:

6. ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմի 23.05.2008թ. որոշմամբ դիմումը քննության է ընդունվել «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի 1-ին, 4-րդ եւ 5-րդ մասերի կապակցությամբ, իսկ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված վերոհիշյալ դրույթների սահմանադրականությունը պարզելու անհրաժեշտության հարցի լուծումը թողնվել է գործի դատաքննության փուլին:

Դիմումի քննության արդյունքներով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի 2008թ. հունվարի 22-ի որոշման մեջ հիշատակվում է «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի՝ **նոր երեսան եկած հանգամանքներով** ներկայացված վճռաբեկ բողոքներին վերաբերող 4-րդ մասը (նույն որոշման մեջ ոչ ճիշտ վկայակոչելով նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80 հոդվածը, որը դիմումի առարկային չի առնչվում եւ վերաբերում է գործի վարույթի ժամանակ գործին մասնակցող անձանց հասցեները փոխվելուն): Սակայն գործի հանգամանքները, մասնավորապես նաեւ Երեսանի քաղաքացիական դատարանի 19.03.2008թ.՝ **նոր հանգամանքներով** դատական ակտի վերանայման վարույթ հարուցելը մերժելու մասին որոշումը, վկայում են, որ խոսքը վերաբերում է նույն հոդվածի՝ **նոր հանգամանքներով ներկայացված վճռաբեկ բողոքներին վերաբերող 5-րդ մասին**, քանզի դիմողը վճռաբեկ դատարան է դիմել վերջինիս որոշումը վերանայելու պահանջով՝ **ոչ թե նոր երեսան եկած հանգամանքով, այլ նոր հանգամանքով**, որպիսին հանդիսանում է ՀՀ սահմանադրական դատարանի 09.04.2007թ. ՄԴՈ-690 որոշումը: Հետեւաբար, տվյալ գործի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանի քննության առարկան, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածին համապատասխան՝ որպես դիմողի նկատմամբ կիրառված օրենքի դրույթ, «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի 5-րդ մասն է:

Սահմանադրական դատարանը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասին համապատասխան, հարկ է համարում պարզել նաեւ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի վիճարկվող դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված եւ վեճի առարկա օրենքի հիման վրա ընդունված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 2-րդ մասի եւ 204.26 հոդվածի դրույթների սահմանադրականությունը, քանզի այդ դրույթները, վիճարկվող դրույթների հետ համակցության մեջ, կազմում են

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման իրավա-  
կարգավորման բաղկացուցիչ տարրերը:

Ավելին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումն առնչվում է **նոր հանգամանքների** հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի առանձին տարրերի սահմանադրականությանը, սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ այդ ինստիտուտի իրավա-  
կարգավորման բոլոր տարրերի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2 բաժնի դրույթների սահմանադրականությանը՝ իրենց հա-  
մակարգային ամբողջականության մեջ: Հետեւաբար, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաեւ 2007թ. նոյեմ-  
բերի 28-ին ընդունված «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգր-  
քում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 76 հոդվածի սահմանադրականության հարցին, որով ուժը կորցրած է ճանաչ-  
վել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5.1 բաժինը, ինչ-  
պես նաեւ 72 հոդվածի սահմանադրականության հարցին, որով ՀՀ քաղա-  
քացիական դատավարության օրենսգիրքը լրացվել է 3.2 բաժնով:

7. Նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտն ըստ էության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում իր ամրագրումն ստացավ «ՀՀ քաղաքացիական դատավա-  
րության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մա-  
սին» 18.02.04թ. ՀՕ-39-Ն ՀՀ օրենքով: Վերջինս ՀՀ քաղաքացիական դա-  
տավարության օրենսգիրքը լրացրեց նոր՝ «Վճիռների եւ որոշումների վե-  
րանայումը նոր հանգամանքներով» վերտառությամբ 5.1 բաժնով, որով սահմանվեց նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայ-  
ման ընթացակարգը: 2007թ. փետրվարի 21-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփո-  
խություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով լրացում է կատարվել նոր հանգամանքներով վճիռների եւ որոշումների վերանայ-  
ման հիմքերը սահմանող 241.1 հոդվածում: Նշված օրենքի 22 հոդվածը, մասնավորապես, սահմանում էր. «Օրենսգրքի 241.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը «Հայաստանի Հանրապետության» բառերից առաջ լրացնել «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրա-  
պետության օրենքով նախատեսված դեպքերում» բառերով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5.1 բաժինն ուժը կորցրած է ճանաչվել վերոհիշյալ՝ «ՀՀ քաղաքացիական դատավարու-  
թյան օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 28.11.07. ՀՕ-277-Ն ՀՀ օրենքի 76 հոդվածով:

8. Վիճարկվող եւ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթների վերլուծությունը, ինչպես նաեւ դրանց իրավակիրառական պրակտիկան վկայում են, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման օրենսդրական ներկա կարգավորման հիմնական տարրերը հետեւյալներն են.

- նոր հանգամանքներով վերանայման ենթակա են միայն առաջին ատյանի դատարանների դատական ակտերը,
- նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու իրավասություն ունի միայն համապատասխան դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարանը,
- վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների դատական ակտերը նշված հիմքերով վերանայման ենթակա չեն,
- վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանները նշված հիմքերով դատական ակտերի վերանայման իրավասությամբ օժտված չեն,
- նոր հանգամանքների հիմքով վերանայման ենթակա են ոչ միայն առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այն է՝ վճիռները, այլ նաեւ առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերը:

Նշված իրավակարգավորման արդյունքում ձեւավորված իրավակիրառական պրակտիկայի մասին է վկայում գործում առկա՝ Երեւանի քաղաքացիական դատարանի՝ Նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելը մերժելու մասին 19.03.2008թ. որոշումը: Այս որոշմամբ դատարանը մերժել է ՀՀ սահմանադրական դատարանի 09.04.2007թ. ՄԴՈ-690 որոշման հիման վրա վճռաբեկ դատարանի թիվ 3-1882/ՎԴ/ քաղաքացիական գործով 30.11.2007թ. որոշումը վերանայելու խնդրանքը՝ պատճառաբանելով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նոր հանգամանքներով վերանայման ենթակա են միայն առաջին ատյանի դատական ակտերը:

9. Նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ներկա իրավակարգավորման հիմքում թերեւս ընկած է ՀՀ դատական օրենսգրքի այն տրամաբանությունը, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործող դատարաններից ընդհանուր իրավասության դատարաններ են հանդիսանում միայն առաջին ատյանի դատարանները, եւ քաղաքացիական դատավարության շրջանակներում վեճն ըստ էության լուծող դատական ակտ է համարվում առաջին ատյանի դատարանի վճիռը:

Դա իր հերթին բխում է դատական օրենսգրքի՝ դատարանակազմությանը վերաբերող դրույթների հիմքում ընկած այն տրամաբանությունից,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

որ ընդհանուր կանոնը մասնագիտացված դատարաններն են, իսկ ընդհանուր իրավասության դատարանները, փաստորեն, բացառություն են այդ ընդհանուր կանոնից: Մինչդեռ ՀՀ Սահմանադրության 92 հոդվածում ամրագրված է հակառակ տրամաբանությունը:

Սույն գործի շրջանակներում իրավասու չլինելով անդրադառնալու ՀՀ դատական օրենսգրքի՝ նշված տրամաբանության վրա հիմնված դրույթների սահմանադրականությանը, այնուամենայնիվ, սահմանադրական դատարանը նման մոտեցումը խնդրահարույց է համարում ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի տեսանկյունից: ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի 1-ին մասն ամրագրում է Հայաստանի Հանրապետության դատարանակազմության հիմքում ընկած հետեւյալ ընդհանուր կանոնը. «Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները եւ վճռաբեկ դատարանը...»: Սահմանելով այն ընդհանուր նորմը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության դատական համակարգի հիմնական բաղադրիչն ընդհանուր իրավասության դատարաններն են՝ միաժամանակ նույն դրույթով Սահմանադրությունն ամրագրել է ընդհանուր իրավասության դատարանների եռաստիճան համակարգը, որը ներկայացված է առաջին ատյանի դատարանների, վերաքննիչ դատարանների եւ վճռաբեկ դատարանի միջոցով: Սահմանադրական այս դրույթին համահունչ՝ ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա գործերի առնչությամբ քաղաքացիների համար գործում է դատական պաշտպանության եռաստիճան համակարգը. ընդհանուր իրավասության դատարանների բոլոր ակտերը ենթակա են բողոքարկման քաղաքացիական եւ քրեական վերաքննիչ դատարաններ, իսկ այդ ակտերի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանների ընդունած որոշումները ենթակա են բողոքարկման վճռաբեկ դատարան:

ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթի երկրորդ հատվածը սահմանում է նույն դրույթի 1-ին հատվածում ամրագրված վերոհիշյալ ընդհանուր կանոնից հետեւյալ բացառությունը. «...իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաեւ մասնագիտացված դատարաններ»: ՀՀ Սահմանադրությունը, նշված նորմն ամրագրելով որպես վերոհիշյալ ընդհանուր կանոնից բացառություն, չի մանրամասնում մասնագիտացված դատարանների ո՛չ տեսակները, ո՛չ ատյանները՝ դրանց սահմանումը թողնելով օրենսդրի հայեցողությանը: Ուստի օրենսդիրն ազատ է մասնագիտացված դատարանների պարագայում սահմանելու վերաքննիչ ատյան:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 92 հոդվածը նախատեսում է ընդհանուր իրավասության դատարանների՝ ստորադասության վրա հիմնված եռաստիճան համակարգ, որում հստա-

կեցված է նաև վճռաբեկ դատարանի ֆունկցիոնալ դերը՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու առումով: Այդ համակարգին բնորոշ է տարբեր ատյանի դատարանների միջև եղած գործառնական կապը: Տարբեր ատյանների միջև եղած կապը նպատակ է հետապնդում ապահովել դատարանների կողմից կայացվող դատական ակտերի օրինականությունը եւ հիմնավորվածությունը, վերացնել օրենքի խախտումները եւ վերականգնել դատավարության մասնակիցների խախտված իրավունքները:

Տարբեր ատյանների դատարանները միմյանցից տարբերվում են իրենց իրավասությունների շրջանակով: Տվյալ դատական ատյանի իրավասությունների շրջանակով են պայմանավորված այդ դատարանի կողմից ընդունվող դատական ակտերի բնույթն ու բովանդակությունը. յուրաքանչյուր դատական ատյանի կողմից ընդունվող ակտը հանդիսանում է տվյալ դատական ատյանի իրավասությունների եւ գործառնությունների կրողը: Հետեւաբար, հաշվի առնելով, որ յուրաքանչյուր դատական ատյանի գործառնության իրացման արդյունքում անձի իրավունքների դատական պաշտպանությունը նոր որակ է ստանում, յուրաքանչյուր դատական ատյանի կողմից իր գործառնությունների իրականացման արդյունքում ընդունված դատական ակտն իր ինքնուրույն դերակատարությունն ունի դատական պաշտպանության իրավունքի իրացման ողջ գործընթացում:

Այսպես, վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների լիազորությունների ուսումնասիրությունը վկայում է, որ, ընդհանուր առմամբ, վերաքննիչ եւ վճռաբեկ դատարաններն իրենց լիազորությունների շրջանակներում արարադատություն իրականացնելիս.

- մերժում են վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ. ընդ որում, այն դեպքում երբ բողոքարկվող ակտը պատճառաբանված է թերի կամ սխալ, կամ ընդհանրապես պատճառաբանված չէ, վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանը պատճառաբանում է ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը,
- բեկանում են դատական ակտը եւ գործն ուղարկում համապատասխան ստորադաս դատարան,
- բեկանում եւ փոփոխում են ստորադաս դատարանի դատական ակտը:

Վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների լիազորությունների բնույթից բխում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերանայելիս, հատկապես այն դեպքում, երբ վերադաս դատական ատյանը փոփոխում է ստորադաս դատական ատյանի ակտը, վերադաս դատական ատյանների դատական ակտերը հանդես են գալիս որպես դատական պաշտպանության իրավունքի իրացման նոր եւ ինքնուրույն արդյունք՝ ըստ էության ազդելով

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ստորադաս դատարանի դատական ակտի բովանդակության վրա եւ դատավարության կողմերի համար առաջացնելով նոր իրավական հետեւանքներ:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման իրավակարգավորումը շեղվել է վերոհիշյալ տրամաբանությունից՝ աղճատելով ստորադասության վրա հիմնված դատական եռաստիճան համակարգի էությունն ու բովանդակությունը, դատական երեք ատյանների միջեւ ֆունկցիոնալ կապը՝ հաշվի չառնելով դատական երեք ատյանների գործառույթների առանձնահատկությունները:

10. Սահմանադրական դատարանը նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5.1 նախկին բաժնով եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2 բաժնով սահմանված ներկա իրավակարգավորման համեմատական վերլուծության արդյունքում արձանագրում է, որ դրանց միջեւ առկա են էական սկզբունքային տարբերություններ, որոնք, մասնավորապես, դրսևորվում են նրանում, որ նախկին կարգավորմամբ.

- նոր հանգամանքներով վերանայման ենթակա էին ինչպես առաջին ատյանի դատարանի, այնպես էլ վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների դատական ակտերը,
- վերանայման ենթակա էին վերոհիշյալ դատարանների՝ ինչպես գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այնպես էլ նրանց կայացրած միջանկյալ ակտերը,
- վճիռները եւ որոշումները վերանայելու իրավասություն ունեին.

1) առաջին ատյանի դատարանը՝ իր օրինական ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը վերանայելու կապակցությամբ,

2) վերաքննիչ դատարանը՝ իր օրինական ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը վերանայելու կապակցությամբ,

3) վճռաբեկ դատարանը՝ իր ուժի մեջ մտած որոշումը վերանայելու կապակցությամբ, որը կայացվել է առաջին ատյանի դատարանի, վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի կամ որոշման վերաբերյալ:

Ի տարբերություն նախկին կարգավորման, ինչպես նշվեց, ներկա իրավակարգավորման հիմնական առանձնահատկությունն այն է, որ նոր հանգամանքների հիմքով հնարավոր է միայն առաջին ատյանի դատարանների դատական ակտերի վերանայումը նույն ատյանի դատարանի կողմից:

Բացի դրանից, եթե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախկին 5.1 բաժնում օգտագործվում էր միայն «վճիռ եւ որոշում» հասկա-



ցությունը՝ պարզորոշ կերպով մատնացույց անելով, որ վերանայման ենթակա են ինչպես գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այնպես էլ՝ միջանկյալ դատական ակտերը: Մինչդեռ օրենսգրքի գործող 3.2 բաժնում օգտագործվում է «դատական ակտ» հասկացությունը, եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթների բովանդակային մեկնաբանությունն է միայն հնարավորություն տալիս պարզելու, որ խոսքը վերաբերում է ոչ միայն գործն ըստ էության լուծող դատական ակտին, այլ նաեւ միջանկյալ դատական ակտին:

Սահմանադրական դատարանը վերոհիշյալ համեմատական վերլուծության արդյունքում նշում է, որ նախկին իրավակարգավորումն ուներ հստակ, լիարժեք եւ ողջամիտ տրամաբանություն՝ քաղաքացիների իրավունքների վերականգնումն ապահովելու հնարավորության տեսանկյունից՝ երաշխավորելով նոր երեսան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման ընթացակարգ՝ դատական բոլոր ատյաններում: Հետեւաբար, հաշվի առնելով նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 17-րդ մասի պահանջները, սահմանադրական դատարանը գտնում է, որ մինչեւ ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ սահմանադրական դատարանի սույն որոշմամբ արձանագրված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ հարցի հետագա կանոնակարգումը, կարող է գործել նշված ինստիտուտի այն իրավակարգավորումը, որը սահմանվել էր 18.02.2004թ. ՀՕ-39-Ն օրենքով:

11. Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ դատական ակտի վերանայման համար նոր հանգամանք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի՝ ուժի մեջ մտած որոշումը, որով ամբողջությամբ կամ մի մասով հակասահմանադրական է ճանաչվել այն օրենքը կամ այլ իրավական ակտը, որը կիրառել է դատարանը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտի վերանայման միջոցով անձի խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է բացառապես վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների ակտերի վերանայում: Այսպես, ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ անհատական դիմումի շրջանակներում սահմանադրական դատարանում կարող են վիճարկվել **դատարանի վերջնական ակտով** կիրառված օրենքի դրույթները: Որպես վերջնական դատական ակտ առանձին դեպքերում կարող են հանդես գալ տարբեր ատյանի՝ առաջին ատյանի, վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանի դատական ակտերը: Առավել հաճախ վերջնական դատա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

կան ակտը վճռաբեկ դատարանի ակտն է, որը կայացվել է ի սպառումն պաշտպանության բոլոր միջոցների: Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ սահմանադրական նշված դրույթը որպես անհատական դիմումի ընդունելիության պայման ամրագրում է վիճարկվող օրենքի դրույթի **վերջնական դատական ակտով կիրառված լինելու պահանջը**, ինչը չի նշանակում, որ վերջնական դատական ակտով կիրառված դրույթը պետք է պարտադիր կերպով կիրառված լինի նաեւ առաջին ատյանի եւ վերաքննիչ դատարաններում. օրենքի դրույթի սահմանադրականությունը սահմանադրական դատարանում վիճարկելու համար բավական է միայն այդ դրույթի կիրառումը վերջնական դատական ակտով: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետը հնարավոր է համարում սահմանադրական դատարանում այնպիսի օրենքի դրույթի սահմանադրականության վիճարկում, որը կիրառվել է որպես վերջնական դատական ակտ հանդիսացող՝ վճռաբեկ դատարանի կամ վերաքննիչ դատարանի ակտով, սակայն չի կիրառվել առաջին ատյանի դատարանի ակտով: Նման իրավիճակում, այս կամ այն օրենքի դրույթը սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու դեպքում սահմանադրական դատարանի համապատասխան որոշման հիման վրա անձի խախտված իրավունքների վերականգնման տեսանկյունից առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերանայումը դառնում է անհիմաստ եւ անհնարին. սահմանադրական դատարանի որոշման հիման վրա անձի խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է միայն վերջնական դատական ակտի վերանայում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ անհատական դիմումների քննության ընդունման առնչությամբ սահմանադրական դատարանում արդեն ձեւավորված է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի վերոհիշյալ մեկնաբանությանը համապատասխան իրավակիրառական պրակտիկա:

Բացի դրանից, սահմանադրական դատարանում կարող են վիճարկման առարկա դառնալ նաեւ այն դատավարական նորմերը, որոնք կանոնակարգում են վարույթի կոնկրետ ձեւերը, այն է՝ վարույթն առաջին ատյանի դատարանում, վերաքննիչ դատարանում կամ վճռաբեկ դատարանում: Նման նորմերը կիրառելի են միայն տվյալ դատական ատյանի դատական ակտով:

Ավելին, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եւ՝ վերաքննիչ դատարանը, եւ՝ վճռաբեկ դատարանն ստորադաս դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանում է այդ ակտը, եթե գտնում է, որ այն թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված կամ պատճառաբանված չէ: Այս

դեպքում վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանը կարող են կիրառել օրենքի դրույթներ, որոնք ստորին ատյանի դատարանի կողմից չեն կիրառվել:

Միաժամանակ, նոր հանգամանքների հիման վրա վերանայման են ենթակա ոչ միայն գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այլ նաև միջանկյալ դատական ակտերը: Իսկ միջանկյալ ակտերի բողոքարկման արդյունքում վերաքննիչ եւ վճռաբեկ դատարաններն իրավասու են կայացնելու նոր դատական ակտեր, որոնք օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Այս դեպքում ավելի քան ակնհայտ է, որ միայն առաջին ատյանի դատարանի միջանկյալ ակտի՝ նոր հանգամանքների հիմքով վերանայման հնարավորությունը բացառում է վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների կողմից միջանկյալ դատական ակտերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս կայացված նոր դատական ակտերի վերանայման հնարավորությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման առկա իրավակարգավորման պայմաններում չի ապահովվում սահմանադրական դատարանի որոշումների լիարժեք կատարումը՝ անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացումը դարձնելով ինքնանպատակ եւ ոչ արդյունավետ:

12. Հանաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ դատական ակտի վերանայման համար նոր հանգամանք է հանդիսանում նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը, որով հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման հանգամանքը: Այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-751 որոշման մեջ մտահոգություն է հայտնել առ այն, որ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթն իրավակիրառական պրակտիկայում կարող է լուրջ խոչընդոտներ հարուցել ոչ միայն սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա անձանց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների վերականգնման կամ պաշտպանության համար, այլ նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա անձանց կոնվենցիոն իրավունքների վերականգնման եւ պաշտպանության, հետեւաբար՝ նաև Եվրոպական դատարանի վճիռները կատարելու՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորության բարեխիղճ կատարման համար»:

Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանու-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

թյան մասին եվրոպական կոնվենցիայի 46 հոդվածն ամրագրում է պայմանավորվող կողմերի՝ Եվրոպական դատարանի վճիռները կատարելու պարտավորությունը: Ի կատարումն Եվրոպական դատարանի վճիռների՝ պայմանավորվող պետություններից, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունից, պահանջվում է, ի թիվս այլոց, ձեռնարկել անհատական բնույթի միջոցառումներ: Վերջիններիս խնդիրն է վերացնել ժամանակի մեջ շարունակվող իրավախախտումը եւ այդ իրավախախտման հետեւանքները՝ մինչեւ կոնվենցիոն իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակը հնարավորինս վերականգնելու նպատակով (*restitutio in integrum*): Անհատական բնույթի միջոցառումները, որպես կանոն, ներառում են Եվրոպական դատարանի վճռի հիման վրա ներպետական դատական ակտերի վերանայումը: Ի կատարումն Եվրոպական դատարանի վճռի՝ նման անհատական բնույթի միջոցառումն անխուսափելի է լինում բոլոր այն դեպքերում, երբ կոնվենցիոն իրավունքի խախտման պատճառը ներպետական դատական վարույթի ընթացքում դատավարական նորմերի խախտումն է: Հարկ է նկատել, որ դատավարական նորմերի խախտումը կարող է տեղի ունեցած լինել ներպետական ցանկացած դատական ատյանում: Հետեւաբար, ի կատարումն Եվրոպական դատարանի վճռի՝ անհրաժեշտ է վերանայել այն դատական ատյանի ակտը, որի կողմից թույլ է տրվել դատավարական նորմի սխալը. եթե առաջին ատյանի դատարանը գործի քննությունն իրականացրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածում ամրագրված՝ արդար դատաքննության կոնվենցիոն երաշխիքների պահպանմամբ, ապա առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերանայման խնդիր չի կարող ծագել:

Սահմանադրական դատարանն այս կապակցությամբ հարկ է համարում վկայակոչել նաեւ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 19.01.2000թ. Նախարարների ներկայացուցիչների 694 նստաշրջանում ընդունված «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հիման վրա ներպետական մակարդակով գործերի վերանայման եւ վարույթի նորոգման մասին» N R (2000) 2 հանձնարարականը: Վերջինս, մասնավորապես, ամրագրում է. «Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն ... նկատի ունենալով, որ Դատարանի վճիռների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելուն ուղղված Նախարարների կոմիտեի պրակտիկան ցույց է տալիս, որ որոշակի հանգամանքներում գործերի վերանայումը կամ վարույթի նորոգումը հանդիսանում է ամենաարդյունավետ, եթե ոչ միակ միջոցը *restitutio in integrum*-ի հասնելու համար»:

1. Առաջարկում է Պայմանավորվող պետություններին համոզվել, որ ներպետական մակարդակում գոյություն ունեն համարժեք հնարավորություններ *restitutio in integrum*-ի հասնելու համար...»:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ Եվրոպական դատարանի վճռի հիման վրա ներպետական դատական ակտի վերանայման առկա իրավակարգավորումն առանձին դեպքերում ոչ միայն հնարավորություն չի տա վերականգնելու անձի խախտված իրավունքը, այլ նաև կխոչընդոտի Հայաստանի Հանրապետության կողմից Եվրոպական դատարանի վճիռները կատարելու՝ Կոնվենցիայով ստանձնած պարտավորության լիարժեք կատարմանը:

Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ Եվրոպական դատարանի պրակտիկայում հետետողականորեն զարգանում է, այսպես կոչված՝ «ուղենիշ (դեկավար) վճիռների» ինստիտուտը: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ Եվրոպական դատարանը տվյալ պայմանավորվող պետության դեմ ուղղված մի շարք միանման գանգատներից ընտրում է մեկ առավել տիպային օրինակ եւ ըստ էության քննում եւ վճիռ է կայացնում միայն այդ գանգատի կապակցությամբ. մնացած գանգատների հեղինակների իրավունքների վերականգնումը կատարվում է ներպետական մակարդակում՝ այդ «ուղենիշ վճռի» հիման վրա: Հաշվի առնելով Եվրոպական դատարանի պրակտիկայում առկա այդ զարգացումները եւ ելնելով «ուղենիշ վճիռների» հիման վրա ներպետական մակարդակում՝ Եվրոպական դատարանը դիմած քաղաքացիների իրավունքների վերականգնման հնարավորությունն ապահովելու անհրաժեշտությունից, ներպետական օրենսդրությունը պետք է այս հանգամանքը նույնպես հստակ ամրագրի:

13. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.28 հոդվածը սահմանում է վերանայման արդյունքում դատարանի լիազորությունները: Վերջիններս, ի թիվս այլոց, ներառում են նաև նախորդ դատական ակտն ուժի մեջ թողնելը: Եթե Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի հիման վրա ներպետական դատական ակտի վերանայման արդյունքում հնարավոր է այդ դատական ակտն ուժի մեջ թողնելը, ապա այն դեպքում, երբ դատական ակտի համար որպես նոր հանգամանք հիմք է հանդիսանում սահմանադրական դատարանի՝ համապատասխան օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին որոշումը, ապա գործնականում վերանայված ակտի ուժի մեջ մնալն անհնարին է, որովհետև արդարադատության հիմքում դրվել է ու կշարունակի ուժի մեջ մնալ հակասահմանադրական նորմը:

14. Նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ներկայումս սահմանված իրավակարգավորման արդյունք կարող է հանդիսանալ այն, որ անհ-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նարին կդառնա վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների դատական ակտերը նոր հանգամանքներով վերանայելը: Նման իրավիճակում գործնականում դատական ակտի վերանայման ինստիտուտը դադարում է գործել ընդհանրապես՝ հնարավորություն չտալով վերականգնել անձի խախտված իրավունքը՝ ինչն առկա է սույն գործով դիմողի առնչությամբ:

Սահմանադրական դատարանը դեռևս 2008թ. ապրիլի 15-ի իր ՍԴՈ-751 որոշման մեջ անձի՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքի իրացման արդյունավետության տեսանկյունից կարեւորել է «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով՝ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի կարգի սահմանումը, որը, նախ՝ չի խաթարի երկրի իրավական անվտանգությունն ու քաղաքացիական շրջանառության կայունությունը, ինչպես նաև լիարժեք հնարավորություն կտա անձին սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերականգնելու հակասահմանադրական նորմի կիրառման արդյունքում խախտված իր իրավունքը»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթներն անձին զրկում են նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման միջոցով իր խախտված իրավունքների լիարժեք վերականգնման հնարավորությունից՝ խաթարելով երկրի իրավական անվտանգությունն ու քաղաքացիական շրջանառության կայունությունը, մեծացնելով կոռուպցիոն ռիսկը, թույլ չտալով Հայաստանի Հանրապետությանը լիարժեք եւ բարեխղճորեն կատարելու ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման համակարգն արդյունավետ կարող է գործել միայն այն դեպքում, երբ կապահովվի նոր հանգամանքների հիմքով դատական բոլոր ատյանների ակտերի վերանայման հնարավորությունը, բացառելով ստորադաս ատյանի դատարանի կողմից վերադաս դատարանի ակտի վերանայումը:

15. Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, որ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերով, ի խախտումն ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի, անձի իրավական վիճակը վատթարացնող իրավակարգավորմանը տրվել է հետադարձ ուժ, ապա այս կապակցությամբ սահմանադրական դատարանը, ելնելով խնդրո առարկա ինստիտուտի նախկին եւ ներկա իրավակարգավորման վերոհիշյալ համեմատական վերլուծության արդյունքներից եւ նախկին իրավակարգավորմանը տված իր վերոհիշյալ գնահատականից, գտնում է, որ իրոք նոր իրա-

վակարգավորմամբ ստեղծվել է անձի համար ավելի անբարենպաստ վիճակ, քանի որ անձը գրկվել է նոր հանգամանքի հիմքով վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների ակտերը վերանայելու հնարավորությունից: Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ նշյալ դրույթները, որոնց բովանդակությունը հանգում է վճռաբեկ բողոքները համապատասխան դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարան փոխանցելուն, ինքնին չի ենթադրում, որ վերջինս պետք է մինչեւ օրենքի ուժի մեջ մտնելը ներկայացված բողոքների առնչությամբ հետադարձ ուժով կիրառի անձի համար վատթարացնող հետեւանք ունեցող նոր իրավակարգավորումը՝ նրան գրկելով դատական ակտի վերանայման հնարավորությունից: Սակայն, եթե նույնիսկ համապատասխան դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարանը, որին վիճարկվող դրույթի հիման վրա փոխանցվել է վճռաբեկ բողոքը, փորձի կիրառել նախկին իրավակարգավորումը, ապա այն կհանգեցնի մեկ այլ անընդունելի իրավիճակի, երբ վերադաս դատական ակտը կվերանայվի ստորադաս դատարանի կողմից:

Իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ վիճարկվող դրույթներն ստացել են այնպիսի մեկնաբանություն, որ այդ դրույթների հիման վրա վճռաբեկ բողոքն ստացած համապատասխան առաջին ատյանի դատարանը կիրառում է նոր իրավակարգավորումը՝ մերժելով վերադաս ատյանների դատական ակտերը վերանայելու խնդրանքը՝ դրանով իսկ, ի խախտումն ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի, հետադարձ ուժ տալով անձի վիճակը վատթարացնող օրենքին:

16. Դիմողի պնդմամբ՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի 1-ին մասը, ըստ որի՝ նշված օրենքն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 1-ից, խախտում է ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի 2-րդ պարբերության պահանջը, համաձայն որի՝ օրենքներն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո: Նշված խախտումը, ըստ դիմողի՝ դրսևորվել է նրանում, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46 հոդվածի պահանջներին համապատասխան նշված օրենքը պետք է ուժի մեջ մտնե՞ր պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, սակայն պաշտոնական տեղեկագրում հրապարակվելով 26.12.2007թ.՝ ուժի մեջ է մտել օրենքով սահմանված տասնօրյա ժամկետից շուտ, այն է՝ 2008թ. հունվարի 1-ից:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը նման ժամկետ սահմանել է՝ ելնելով օրենքի ուժի մեջ մտնելու համար օրենսդ-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

րությամբ սահմանված համապատասխան ընթացակարգի տարբեր փուլերի համար սահմանված եւ անհրաժեշտ ժամկետների ողջամիտ հաշվարկից:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը նկատի է ունեցել նաեւ այն պարագան, որ տարբեր տեխնիկական հանգամանքների բերումով իրավական ակտը կարող է պաշտոնապես հրապարակվել նաեւ ավելի ուշ, քան տվյալ իրավական ակտով սահմանված՝ դրա ուժի մեջ մտնելու օրը: Մասնավորապես, 62 հոդվածի 6-րդ մասում ամրագրված է, որ «Եթե նորմատիվ իրավական ակտը չի հրապարակվել այնտեղ նշված իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ, ապա իրավական ակտն ուժի մեջ մտնելու օր է համարվում դրա հրապարակմանը հաջորդող օրը, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ բոլոր կոնկրետ դեպքերում իրավակիրառ սուբյեկտներն օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետի առնչությամբ պետք է առաջնորդվեն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ի**.

1. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80 հոդվածի 4-րդ մասի առնչությամբ գործի վարույթը կարճել:

2. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80 հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80 հոդվածի 5-րդ մասը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակությամբ հանդերձ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18, 19 եւ 42 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

4. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետու-



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

թյան օրենքով նախատեսված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2 բաժնի 204.20 հոդվածի 2-րդ մասը եւ 204.26 հոդվածը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18, 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

5. Վերոհիշյալ նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու արդյունքում օրենսդրական բացը բացառելու անհրաժեշտությունից ելնելով, նկատի ունենալով սույն որոշման 10-րդ կետում սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասով, ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչել նաեւ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 28.11.2007թ. ՀՕ-277-Ն ՀՀ օրենքի՝ սույն որոշման 3-րդ եւ 4-րդ կետերով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավադրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված 72 եւ 76 հոդվածները:

6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**9 սեպտեմբերի 2008 թվականի  
ՍԳՈ- 758**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-ԻՆ՝ ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳՈՒՄ  
ԵՎ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**12 սեպտեմբերի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի փետրվարի 12-ին՝ Լյուքսեմբուրգում եւ 2008 թվականի փետրվարի 29-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպա-

կան ներդրումային բանկի միջև Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական ներդրումային բանկի գործունեության կառավարման համար շրջանակային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է ՀՀ սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2008 թվականի փետրվարի 12-ին՝ Լյուքսեմբուրգում եւ 2008 թվականի փետրվարի 29-ին՝ Երեւանում:

2. Համաձայնագրի նպատակն է Եվրոպական ներդրումային բանկի օգնությամբ հեշտացնել Հայաստանին հետաքրքրող ներդրումային ծրագրերի ֆինանսավորումը՝ վարկերի, երաշխիքների կամ այլ մեխանիզմների միջոցով:

3. Համաձայնագրում ամրագրված են միջոցների փոխանցման կարգը, ծրագրերի իրականացման համար հայտարարվող մրցույթների (տեղեր) կարգը, կողմերի արտոնությունները:

4. Սույն համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

Եվրոպական ներդրումային բանկին վերաբերող շահաբաժինները եւ բոլոր մնացած վճարումները, որոնք բխում են համաձայնագրից, ինչպես նաեւ նման գործողությունների հետ կապված բանկի ակտիվներն ու եկամուտներն ազատել հարկերից,

երաշխավորել, որ ծրագրերը, ինչպես նաեւ դրանց իրականացման համար կնքված պայմանագրերը հարկային, մաքսային եւ այլ հարցերի մասով օգտվեն ոչ պակաս բարենպաստ պայմաններից, քան այն պայմաններն են, որոնք սահմանված են ցանկացած այլ միջազգային ֆինանսական կազմակերպության համար՝ ընտրելով դրանցից ամենաբարենպաստը,

առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության չիրականացնել բռնագրավում, սեփականագրկում կամ ցանկացած այլ միջամտություն ծրագրի ակտիվների կամ եկամուտ ստեղծելու կարողության նկատմամբ, եթե դրանք անհրաժեշտ չեն ծրագրի առնչությամբ առաջացած պարտքի տոկոսները վճարելու համար,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ապահովել, որպեսզի Բանկը Հայաստանի Հանրապետության տարածքում օգտվի լիարժեք իրավունակությունից, ներառյալ, մասնավորապես, պայմանագրեր կնքելու, շարժական եւ անշարժ գույք ձեռք բերելու, տնօրինելու եւ դատավարություններում որպես կողմ հանդես գալու իրավունքները,

Բանկին ազատ մուտք տրամադրել ՀՀ ֆինանսական շուկա՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության,

երաշխավորել, որ Բանկի ակտիվները ենթակա չդառնան խուզարկության եւ սեփականագրվման բոլոր ձեւերի կիրառման, տույժի գանձման եւ պարտքի դիմաց գույքի բռնագրավման ու ցանկացած նման միջոցի կիրառման՝ նախքան իրավասու դատարանի կողմից Բանկի դեմ վերջնական որոշում կայացնելը,

ապահովել, որ Բանկի պաշտոնյաները եւ աշխատակիցները (բացառությամբ ՀՀ քաղաքացիների) օգտվեն անձեռնմխելիությունից՝ պաշտոնական դիրքում կատարած գործողությունների համար եւ տրամադրել դիվանագիտական արտոնություններ եւ միջոցներ՝ պաշտոնական հաղորդակցության, փաստաթղթերի փոխանցման եւ ճանապարհորդության համար,

երաշխավորել, որ Հայաստանի դատարաններն իրավասու են ճանաչել համապատասխան ընդդատության դատարանի կամ տրիբունալի՝ պատշաճ դատական ընթացակարգով տրված վերջնական որոշումը, եւ ապահովել ցանկացած նման որոշման իրականացումը՝ ըստ գործող ազգային կանոնների եւ ընթացակարգերի,

հրաժարվել անձեռնմխելիությունից եւ իրավասու դատարանի կամ տրիբունալի, այդ թվում՝ Եվրոպական համայնքների արդարադատության դատարանի ընդդատության վիճարկման իրավունքից,

ժամանակին տեղեկացնել Բանկին իր կողմից ձեռնարկված ցանկացած միջոցառման, օրինակ՝ օրենսդրության փոփոխության մասին, որոնք կարող են նյութապես անդրադառնալ Բանկին վերապահված իրավունքների եւ շահերի վրա:

5. Համաձայնագիրը սահմանում է նաեւ այն ուժի մեջ մտնելու եւ դադարելու կարգը, ժամկետները, ինչպես նաեւ համաձայնագրի գործողության ընթացքում կողմերի միջեւ ծագած վեճերի լուծման կարգը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին»

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2008 թվականի փետրվարի 12-ին՝ Լյուքսեմբուրգում եւ 2008 թվականի փետրվարի 29-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական ներդրումային բանկի գործունեության կառավարման համար շրջանակային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**12 սեպտեմբերի 2008 թվականի  
ՍԳՈ- 759**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՏՀՏ  
ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԼՈՔԱԼ ԱԼՅԱՆՍԻ ՀԵՏ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**12 սեպտեմբերի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի դեկտեմբերի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Միավորված ազգերի կազմակերպության միջև ՏՀՏ և զարգացման գործալ ալյանսի հետ համագործակցության մասին համաձայ-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԿԻՐ ♦ 2(51)2009  
70

նագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ սահմանադրական դատարան 05.08.2008թ. մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Միավորված ազգերի կազմակերպության միջև ՏՀՏ և զարգացման գլոբալ ալյանսի հետ համագործակցության մասին համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) ստորագրվել է 2007 թվականի դեկտեմբերի 26-ին:

Համաձայնագրի նպատակը Հայաստանի Հանրապետության և Միավորված ազգերի կազմակերպության միջև՝ ի դեմս Տնտեսական և սոցիալական հարցերով վարչության, «Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների զարգացման համար» ծրագրի աշխատանքների հզորացմանն ուղղված գործընկերությունը խթանելը և ոլորտում առկա բացերը լրացնելն է: Այս համագործակցությունը կոչված է նպաստելու տեղեկատվական հասարակության զարգացմանը՝ մասնավորապես, ապահովելով ՏՀՏ ծառայությունների առավել լայն մատչելիություն, էլ. կառավարման համակարգի զարգացում, ՏՀՏ ոլորտում մասնավոր ներդրումների խթանում, զբաղվածության աճ և ՏՀՏ կիրառության խթանում տնտեսական և սոցիալական զարգացման հեռանկարներով:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես.

- աջակցել Միավորված ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական հարցերով վարչության «ՏՀՏ և զարգացման գլոբալ ալյանս» GLO/06/X02 ծրագրին՝ միանվագ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներդնելով 50.000 ԱՄՆ դոլար, որը կուղղվի տարածաշրջանում և այլ երկրներում երիտասարդների միջև գործընկերության ցանցերի ընդլայնմանը, աշխարհի տարբեր երկրների երիտասարդների միջև ՏՀՏ միջոցների տարածմանը, ինչպես նաև կարողությունների ստեղծման միջոցով տարածաշրջանում ՏՀՏ ոլորտում ձեռներեցության խթանմանը,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- Միավորված ազգերի կազմակերպությանը վճարվող 50.000 ԱՄՆ դոլարը փոխանցել միանվագ:

Միավորված ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական հարցերով վարչությունը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներդրված գումարը կկառավարի և պատասխանատու կլինի Միավորված ազգերի կազմակերպության ֆինանսական ընթացակարգերի ու կանոնների, ինչպես նաև գործող այլ նորմերի, կանոնակարգերի և ընթացակարգերի համաձայն:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2007 թվականի դեկտեմբերի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Միավորված ազգերի կազմակերպության միջեւ ՏՀՏ եւ զարգացման գլոբալ ալյանսի հետ համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**12 սեպտեմբերի 2008 թվականի  
ՍԳՈ- 760**





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**12 սեպտեմբերի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի (գեկուցող),

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց միտում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի մայիսի 27-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջեւ ֆինանսական արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 05.08.2008թ. դիմումն է ՀՀ սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

րի տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Արձանագրությունն ստորագրվել է 2008 թվականի մայիսի 27-ին՝ Երեւանում: Արձանագրության նպատակն է սերտացնել բարեկամության եւ համագործակցության կապերը երկու երկրների միջեւ եւ նպաստել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացմանը:

2. Սույն արձանագրությամբ նախատեսված 24 900 000 (քսանչորս միլիոն ինը հարյուր հազար) եվրոյի չափով ֆինանսական օժանդակությունը հատկացվում է Երեւան քաղաքի խմելու ջրի համակարգի բարելավման եւ մաքրման համար: Ֆինանսական օժանդակությունը բաղկացած է Ֆրանսիայի կառավարության 500 000 (հինգ հարյուր հազար) եվրո առավելագույն չափի դրամաշնորհից եւ Ֆրանսիայի կառավարության 24 400 000 (քսանչորս միլիոն չորս հարյուր հազար) եվրո առավելագույն գումարի փոխառությունից:

3. Ֆինանսական արձանագրությունը սահմանում է ֆինանսավորման կառուցվածքը, ծրագրի ֆինանսավորման պայմաններն ու եղանակները, փոխառության ժամկետները եւ մարման կարգը, գանձվող տոկոսագումարները, վճարման եւ գործարքների հաշվեգրանցման կարգը:

4. Ֆինանսական արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- համաֆինանսավորել ֆինանսական արձանագրության մեջ նկարագրված ծրագիրը 2 400 000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) եվրո գումարի չափով,
- հարկում չկիրառել փոխառության պարտքի սպասարկման վճարումների (հիմնական գումարի մարում, տոկոսի վճար, ծախսեր եւ վճարումներ) նկատմամբ,
- հիմնական գումարը կամ տոկոսը ժամանակին չվճարելու դեպքում վճարել մորատորիումային տոկոսներ՝ ֆինանսական արձանագրությամբ սահմանված չափերով եւ պայմաններով,
- ընդունել մյուս կողմի գնահատող առաքելությանը եւ դրա համար հեշտացնել ծրագրին առնչվող տեղեկատվությունների մատչելիությունը:

5. Ֆինանսական արձանագրությունը ֆինանսական օժանդակության հատկացման վերջնաժամկետ է սահմանում 2013թ. հունիսի 30-ը, իսկ հաշվարկային եւ վճարային միջոց՝ եվրոն:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2008 թվականի մայիսի 27-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջեւ ֆինանսական արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**12 սեպտեմբերի 2008 թվականի  
ՍԳՈ- 761**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**1985 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ԳՐԱՆԱԳԱՅՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՅԻԱՅՈՒՄ  
(ԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԸ) ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**12 սեպտեմբերի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ.Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Գ. Գյուրջյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների.

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1985 թվականի հոկտեմբերի 3-ին Գրանադայում ստորագրված՝ Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիայում (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը ՄԳ՝ մուտքագրված 2008 թվականի հուլիսի 1-ին:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 2(51)2009  
76

պետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետագուտելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիան ստորագրվել է 1985 թվականի հոկտեմբերի 3-ին՝ Գրանադա քաղաքում (Իսպանիա), ուժի մեջ է մտել 1987 թվականի դեկտեմբերի 1-ին: Այն Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է 2006 թվականի մայիսի 17-ին:

2. Կոնվենցիայի նպատակն է ամրապնդել եւ խրախուսել Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների միջեւ ընդհանուր ճարտարապետական ժառանգություն հանդիսացող հուշարձանների, համալիրների եւ տեսարժան վայրերի պահպանությանն ու դրա արժեվորմանն ուղղված քաղաքականությունը, նպաստել պետությունների եւ տարածաշրջանի միջեւ այդ ժառանգության պահպանության շուրջ համագործակցությանը:

Կոնվենցիան հղում է կատարել՝

- ա) 1954թ. դեկտեմբերի 19-ին Փարիզում ստորագրված՝ Եվրոպական մշակութային կոնվենցիային, որը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1997թ. փետրվարի 18-ին,
- բ) 1972թ. նոյեմբերի 16-ին ստորագրված՝ Մշակութային եւ բնական համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիային, որին Հայաստանի Հանրապետությունը միացել է ՀՀ Գերագույն խորհրդի 1993թ. հունիսի 22-ի որոշմամբ,
- գ) 1969թ. մայիսի 6-ին ստորագրված՝ Հնագիտական ժառանգության պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային, որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 1992թ. հունվարի 16-ին:

3. Կոնվենցիայի ստորագրմամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես.

- պահպանության ենթակա հուշարձանների, համալիրների եւ տեսարժան վայրերի ճշգրիտ նույնացման նպատակով կատարել գույքագրում, եւ այդ արժեքներին սպառնացող վտանգի դեպքում, առաջին իսկ հնարավորության պարագայում պատրաստել համապատասխան փաստաթղթեր,
- օրենսդրական քայլեր ձեռնարկել ճարտարապետական ժառանգության պահպանության ուղղությամբ,
- իրականացնել վերահսկողություն եւ թույլտվության տրամադրմանն ուղղված պատշաճ ընթացակարգեր,
- կանխել պահպանվող արժեքների աղավաղումը, խարխալումը եւ ոչնչացումը եւ այդ նպատակով օրենսդրության մեջ սահմանել նորմեր,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- որոնց համաձայն կնախատեսվի իրավասու մարմինն ներկայացնել արդեն պահպանվող կամ պահպանության ենթակա հուշարձանների քանդմանը կամ ձեւափոխմանն առնչվող ցանկացած նախագիծ, որը վնաս կհասցնի դրանց շրջակայքին,
- արգելել պահպանվող հուշարձանի ամբողջական կամ մասնակի տեղափոխումը,
- հանրային իշխանությունների կողմից ազգային, տարածաշրջանային եւ տեղական իրավասությունների եւ առկա բյուջետային միջոցների սահմաններում տրամադրել ֆինանսական աջակցություն՝ իր տարածքում գտնվող ճարտարապետական ժառանգության պահպանման եւ վերականգնման աշխատանքներ կատարելու նպատակով,
- միջոցներ ձեռնարկել հուշարձանների շրջակայքում, համալիրների ներսում եւ տեսարժան վայրերում շրջակա միջավայրի ընդհանուր բարեկարգման ուղղությամբ,
- նվազագույնի հասցնել ճարտարապետական ժառանգության ֆիզիկական ոչնչացման վտանգները,
- ճարտարապետական ժառանգության պահպանության մասին օրենսդրության խախտման դեպքում իրավասու մարմինների կողմից ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ,
- հարգելով ժառանգության ճարտարապետական եւ պատմական բնույթը՝ նպաստել պահպանվող արժեքների օգտագործմանը եւ անհրաժեշտության դեպքում հին շենքերի վերաշահագործմանը,
- բարձրացնել հասարակության իրազեկվածությունը ճարտարապետական ժառանգության պահպանության կարեւորության վերաբերյալ,
- փոխանակել պահպանության քաղաքականության վերաբերյալ այնպիսի տեղեկատվություն, որը վերաբերում է պահպանության քաղաքականության իրականացման միջոցներին, մեթոդներին եւ եղանակներին,
- նպաստել ճարտարապետական ժառանգության պահպանության հետ առնչություն ունեցող տարբեր մասնագիտությունների եւ արհեստների ուսուցման ծրագրերին,
- անհրաժեշտության դեպքում կատարել ճարտարապետական ժառանգության պահպանության ոլորտում փորձի եւ փորձագետների փոխանակում:

4. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 9 հոդվածում ամրագրված սկզբունքներից:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 1985 թվականի հոկտեմբերի 3-ին Գրանադայում ստորագրված՝ Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիայում (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

12 սեպտեմբերի 2008 թվականի  
ՍԳՈ- 762



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
ԿԻՈՏՈՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ Բ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**12 սեպտեմբերի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված՝ Կիոտոյի արձանագրության Բ հավելվածում փոփոխության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ ՀՀ ՄԴ-ում 05.08.08թ. մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հայաստանի Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ բնապահպանության նախարար Ա. Հարությունյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը, արձանագրության փոփոխությունը եւ



գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց** .

1. 1997 թվականի դեկտեմբերի 11-ին Կիոտոյում ստորագրվել է Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիային կից Կիոտոյի արձանագրությունը: Արձանագրության ստորագրմամբ կողմերը նպատակ են հետապնդել ՄԱԿ-ի շրջանակներում 1992թ. մայիսի 9-ին Նյու Յորքում ընդունված՝ Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի վերջնական նպատակին հասնելու, ինչպես նաև միջազգային իրավական այլ պարտավորություններով նախատեսված բնապահպանական խնդիրներն առավել արդյունավետ լուծելու համար զարգացնել միջպետական համագործակցությունը:

2. Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիան ընդունվել է ՄԱԿ-ի շրջանակներում 1992թ. մայիսի 9-ին՝ Նյու Յորքում (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 1993թ. մարտի 31-ին՝ ՀՀ Գերագույն խորհրդի ՀՆ-0780-1 որոշմամբ:), իսկ դրան կից Կիոտոյի արձանագրությունն ստորագրվել է 1997թ. դեկտեմբերի 11-ին (Հայաստանի Հանրապետությունը Կիոտոյի արձանագրությանը միացել է 2002թ. դեկտեմբերի 26-ին՝ ՀՀ Ազգային ժողովի Ն-323-2 որոշմամբ:):

Կիոտոյի արձանագրության հավելված Բ-ում փոփոխությունն ստորագրվել է 2006թ. նոյեմբերի 17-ին՝ Նայրոբիում:

Կիոտոյի արձանագրության հավելված Բ-ով նախատեսվում է՝ «...Ավստրիա եւ Բելգիա մասնակիցների միջեւ տեղադրել «Բելառուս» տեքստը»:

Բելառուսի Հանրապետությունը՝ ընդունելով Կիոտոյի արձանագրության ողջ կարեւորությունը, ստանձնում եւ կատարում է կնքված միջազգային պայմանագրի ներքո իր բոլոր պարտականությունները, առաջարկվող ուղղումով ստանձնում է նաև ջերմոցային գազերի կրճատման քանակական պարտավորություն:

3. 2006 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված՝ Կիոտոյի արձանագրության Բ հավելվածում փոփոխության մեջ ամրագրված պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9 հոդվածին, ինչպես նաև կարեւոր իրավական երաշխիք են ստեղծում ՀՀ Սահմանադրության 10 հոդվածում ամրագրված սահմանադրական կարգի հիմունքներն ամրապնդելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2006 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված՝ Կիոտոյի արձանագրության Բ հավելվածում փոփոխության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**12 սեպտեմբերի 2008 թվականի  
ՍԳՈ- 763**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՅՆՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ  
ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՉ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**12 սեպտեմբերի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ.Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի մայիսի 11-ին ստորագրված՝ Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի կանոնադրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ ՀՀ սահմանադրական դատարան 11.06.2008թ. մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Ա. Գրիգորյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց .**

## «ՎՍՏԱՆԱԿՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ»

Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի կանոնադրությունն ստորագրվել է 2007 թվականի մայիսի 11-ին:

Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագիրը կնքվել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Res(2007)8 բանաձևի համաձայն՝ սպորտային քաղաքականության ռազմավարություն մշակելու եւ համապատասխան չափանիշներ սահմանելու, «բարոյական սպորտի» ապահով գործելակերպը հնարավորինս մատչելի դարձնելու համար մասնակից պետություններում եւ նրանց միջեւ սպորտային քաղաքականությունների եւ չափանիշների ներդաշնակեցումը խրախուսելու եւ ապահովելու, միջազգային սպորտում արդիական խնդիրների լուծմանն ուղղված անհրաժեշտ քաղաքականության վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու, սպորտի՝ որպես առողջ ապրելակերպը խթանող միջոցի, զարգացմանը նպաստելու նպատակով:

Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագիրը վերահսկողություն է իրականացնում համաձայնագրի մասնակից պետություններում Եվրոպական սպորտային խարտիայի (Հանձնարարական թիվ R (92) 13 REV) եւ Սպորտային էթիկայի օրենսգրքի (Հանձնարարական թիվ R (92) 14 REV) կիրառման նկատմամբ, քայլեր է ձեռնարկում «Սպորտը բոլորի համար» ծրագրի շրջանակներում կարողությունների զարգացման նպատակով, իրականացնում է սպորտային համագործակցության միջկառավարական միջոցառումներ, Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի անդամների եւ Եվրոպական մշակութային կոնվենցիայի մասնակից պետությունների համար նախապատրաստում եւ կազմակերպում է նախարարական մակարդակով հանդիպումներ:

Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի կանոնադրությամբ նախատեսվում է անհրաժեշտության դեպքում վերոշարադրյալ նպատակների իրականացման համար համաձայնագրի համագործակցությունը «Սպորտային միջոցառումների եւ հատկապես ֆուտբոլային խաղերի ժամանակ հանդիսատեսների անվայել վարքի եւ բռնության դրսևորումների մասին» եվրոպական կոնվենցիայի մշտական կոմիտեի (T-RV), Հակադոպինգային կոնվենցիայի մոնիտորինգի խմբի (T-DO) եւ Հակադոպինգային համաշխարհային գործակալության համապատասխանեցման եվրոպական համաժողովի ժամանակավոր (ad hoc) կոմիտեի (CAHAMA) հետ, Եվրոպական համայնքի, ինչպես նաեւ միջազգային, տարածաշրջանային եւ ազգային մարզական ոչ կառավարական կազմակերպությունների եւ հակադոպինգային կառույցների հետ:

Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի մարմիններն են Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի Ղեկավար խորհուրդը եւ Կանոնադրական խորհուրդը: Ղեկավար խորհուրդը կազմվում է Ընդլայնված մասնակի համաձայնագրի կողմ հանդիսացող յուրա-

քանչյուր անդամի կառավարության կողմից նշանակված մեկական ներկայացուցիչ, եւ պատասխանատու է Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրում սահմանված խնդիրների ընդհանուր իրականացման համար: Կանոնադրական խորհուրդը, որը կազմվում է Եվրոպայի խորհրդի Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի մասնակից անդամ պետությունների Նախարարների կոմիտեի ներկայացուցիչներից եւ համաձայնագրի մասնակից անդամ չհանդիսացող պետությունների կողմից հատուկ այդ նպատակով նշանակված ներկայացուցիչներից, սահմանում է Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի ամենամյա պարտադիր անդամավճարների ընդհանուր գումարը եւ վճարումների չափը, ըստ որի՝ ընդհանուր գումարը բաշխվում է մասնակից պետությունների միջեւ:

Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի կանոնադրությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես.

- նշանակել մեկ ներկայացուցիչ Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի Ղեկավար խորհրդում,
- կատարել ամենամյա վճարումներ, որոնցով ձեւավորվում է համաձայնագրի բյուջեն:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2007 թվականի մայիսի 11-ին ստորագրված՝ Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի կանոնադրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**12 սեպտեմբերի 2008 թվականի  
ՍԳ-Ո- 764**

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ  
(Խորհրդաժողով ԼՂՀ-ում)**

2008թ. դեկտեմբերի 9-10-ը ԼՂՀ-ի մայրաքաղաք Ստեփանակերտում անցկացվեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 60-ամյակին եւ ԼՂՀ Սահմանադրության օրվան նվիրված համատեղ խորհրդաժողով՝ «*Մարդու իրավունքների պաշտպանությունը սահմանադրական արդարադատության պրակտիկայում*» թեմայով: Այն կազմակերպվել էր ՀՀ Սահմանադրական իրավունքի կենտրոնի, ԼՂՀ գերագույն դատարանի, ԼՂՀ Ազգային ժողովի պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի և ԼՂՀ արդարադատության նախարարության կողմից:

Խորհրդաժողովում բացման խոսքով հանդես եկավ ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ պարոն Աշոտ Դուլյանը:

Խորհրդաժողովի մասնակիցներին իրենց ողջույնի խոսքերն ուղղեցին ԼՂՀ Նախագահ պարոն Բակո Սահակյանը և ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ պարոն Գագիկ Հարությունյանը:


Խորհրդաժողովի դեկտեմբերի 9-ի նիստում զեկուցումներով հանդես եկան Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ամբիոնի վարիչ, իրավագիտության թեկնածու Վիգեն Քոչարյանը, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Հարությունյանը, ԼՂՀ գերագույն դատարանի նախագահ Արարատ Դանիելյանը:

Խորհրդաժողովն իր աշխատանքները շարունակեց դեկտեմբերի 10-ին: Ձեկուցումներով հանդես եկան ՀՀ գլխավոր դատախազ, իրավագիտության դոկտոր Աղվան Հովսեփյանը, ՀՀ սահմանադրական դատարանի անդամ Կիմ Բալայանը, ՀՀ սահմանադրական դատարանի անդամ, իրավագիտության թեկնածու Հրանտ Նազարյանը, ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպան Յուրի Հայրապետյանը:

Ձեկուցումներին հաջորդեցին քննարկվող թեմային առնչվող հարց ու պատասխաններ, մտքերի փոխանակումներ ու քննարկումներ, որոնց ընթացքում շոշափվեցին արդարադատության պրակտիկայում մարդու իրավունքների պաշտպանությանը, սահմանադրական վերահսկողության համակարգի, իրավական, ժողովրդավարական պետության արժեքանական հիմնախնդիրներին ու առանցքային նշանակության գործընթացներին վերաբերող բազմաթիվ ու տարաբնույթ հարցեր:

Խորհրդաժողովի աշխատանքներն ամփոփեցին ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ պարոն Աշոտ Դուլյանը և ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ պարոն Գագիկ Հարությունյանը:

## ՇՆՈՐՀԱՆԳԵՍ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆՈՒՄ



**Ապրիլի 3-ին ՀՀ Սահմանադրական դատարանում տեղի ունեցավ Սահմանադրական իրավունքի կենտրոնի հրատարակած «Սահմանադրական արդարադատությունը նոր հազարամյակում» միջազգային քառալեզու «Ալմանախ-2008» տարեգրքի, “Конституционное правосудие” պարբերականի վերջին երկու համարների եւ իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ՍԳ նախագահ Գագիկ Հարությունյանի հեղինակած «Սահմանադրական մշակույթ, պատմության դասերը եւ ժամանակի մարտահրավերները» գրքի անգլերեն հրատարակության շնորհանդեսը՝ մասնակցությամբ**

դիվանագետների, պետական, քաղաքական բարձրաստիճան ալյերի, իրավագետների, դատական իշխանության ներկայացուցիչների:

ՀՀ սահմանադրական դատարանի եւ սահմանադրական իրավունքի կենտրոնի կողմից 2002 թվականից հրատարակվող «Ալմանախ» քառալեզու տարեգիրքն աշխարհի տարբեր երկրների 100-ից ավելի հասցեներում մեծ արձագանք է գտնում՝ բարձր մակարդակի գիտական նյութերի հարուստ բովանդակությամբ, առաջ քաշած հարցերով, թեմատիկայի բազմազանությամբ եւ իր որոշակի նպաստը բերում հասարակության իրավագիտակցության զարգացման գործին: Այս հանդեսում մեծավասանք տպագրվում են երեսանյան միջազգային ավանդական խորհրդաժողովներում արդիական հնչեղություն ունեցող որեւէ հիմնահարցի վերաբերյալ աշխարհի տարբեր երկրներից հրավիրված մասնագետների մոտեցումները, զեկուցումներն ու տվյալ թեմայի քննարկման արդյունք՝ առաջ քաշված հարցադրումներն ու դրանց լուծման ուղիները ներկայացնող նյութեր: Դրանց հեղինակները աշխարհի տարբեր երկրներից երեսանյան խորհրդաժողովին մասնակից հայտնի իրավագետներ են, սահմանադրագետներ, սահմանադրական դատարանների նախագահներ, սահմանադրական արդարադատության բնագավառի ճանաչված մասնագետներ: Հեղինակների առումով անչափ լայն է աշխարհագրությունը:

Ներկայացվող համարում (2008թ.) ամփոփված են անցյալ տարի հրավիրված երեսանյան միջազգային ավանդական խորհրդաժողովում «Սահ-

մանադրական հիմնարար արժեքները եւ հասարակական պրակտիկան» բացառիկ կարեւոր թեմատիկայի քննարկման ընթացքում ներկայացված նյութերը:

Շնորհանդեսում ներկայացվեցին «Конституционное правосудие» պարբերականի՝ 2008 թվականի վերջին եւ 2009 թվականի առաջին համարները: 2008-ի տարեվերջյան համարը հիմնականում կազմված է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության ընդունման 15-ամյակին նվիրված գիտագործնական կոնֆերանսի նյութերով: Այդ կոնֆերանսին մասնակցել եւ զեկուցումով հանդես է եկել ՀՀ ՄԳ նախագահ, Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական արդարադատության մարմինների միջազգային կոնֆերանսի նախագահ Գ. Հարությունյանը: Համարում զետեղված են ՌԴ նախագահ Դ. Մեդվեդեւի ելույթը, ՌԴ ՄԳ նախագահ Վ. Չորկինի զեկուցումը, Գ. Հարությունյանի՝ «Սահմանադրական մշակույթի ձեւավորումը Ռուսաստանում եւ դրա նշանակությունը երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրականության զարգացման գործում» թեմայով զեկուցման տեքստը, Հ. Պապիրի, Ի. Բախտիրաեւի եւ այլոց նյութեր: «Конституционное правосудие» պարբերականի 2009-ի առաջին համարն առանձնանում է մի կարեւոր որակով. այստեղ զետեղված են բացառիկ արժեքավոր նյութեր՝ սահմանադրական արդարադատության պատմության մեջ առաջին անգամ հրավիրված համաշխարհային Կոնգրեսից, որին մասնակցել են 93 երկիր՝ 400 պատվիրակ: Կոնգրեսում ներկայացվել են սահմանադրական արդարադատության ձեւավորման եւ զարգացման միտումներին վերաբերող ազգային զեկույցներ, որոնց թվում նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանի զեկուցումը 1997-ից կազմավորված «Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական դատարանների կոնֆերանս» կազմակերպության անունից՝ որպէս նախագահողի: Պարոն Հարությունյանին էր վերապահված նաեւ ամփոփիչ լիագումար նիստում 40 երկրներից ներկայացված ազգային զեկույցների ընդհանրացման ու ամփոփման պատասխանատվությունը: Միջազգային նշանակություն ստացող ֆորումի հաջող մեկնարկը տրվել է համաշխարհային առաջին Կոնգրեսով, որի բյուրոյի 10 անդամ երկրների շարքում նաեւ Հայաստանն է՝ անմիջականորեն մասնակցի ակտիվ դերով: Պարբերականի համարներն ուղարկվել են հարյուրից ավելի երկրներ եւ տեղակայվել են ինտերնետ կայքում:

Շնորհանդեսում ներկայացվող երրորդ նորությունը Իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Հարությունյանի «Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը եւ ժամանակի մարտահրավերները» գրքի անգլերեն (թարգմ. Արտաշես Էմին) հրատարակությունն էր՝ բոլորովին նոր խոսք հայ իրավագիտության մեջ, որն աշխարհին ճանաչելի է դարձ-



նում նաեւ սահմանադրական մշակույթի ոլորտում մեր ժողովրդի արձանագրած պատմական արժեքները:

Ինչպես նշեցին շնորհանդեսում ելույթ ունեցողներ՝ ՀՀ արդարադատության նախարար Գեորգ Դանիելյանը, ԵԱՀԿ դեսպան Սերգեյ Կապինոսի անունից Երեւանյան գրասենյակի՝ մարդու իրավունքների հարցով պատասխանատու Սիլվիա Պոզոլյան, ՀՀ իրավաբանների միության նախագահ Գագիկ Ղազինյանը, այս գրքում ամենայն բարեխղճությամբ ուսումնասիրված են սահմանադրական մշակույթին առնչվող աղբյուրներն ու փաստերը՝ նախաքրիստոնեական ու քրիստոնեական շրջան, միջնադար, ապա եւ այսօրվա առանձնահատկությունները: Աշխատության մեջ եվրոպական սահմանադրաիրավական զարգացումների ընդհանուր միտումները ելակետ ունենալով՝ ներկայացվել են դրանց էվոլյուցիան, ապագայում առաջադրվելիք խնդիրներն ու վերջիններիս լուծման ճանապարհները:

Գիրքն առանձնանում է նաեւ նրանով, որ հայկական իրականության այս ոլորտն արտերկրներում ճանաչելի ու առավել ընկալելի դարձավ: Պատահական չէ, որ «Սահմանադրական մշակույթ» թեման արդեն հատուկ դասընթաց է հայաստանյան մի շարք բուհերում:

*ՄԴ մամուլի ծառայություն*



**ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ  
ԳԱՏԱՐԱՆՈՒՄ**

**Հունվարի 26-ին լրացավ ՀՀ ՍԳ անդամ Հրանտ Նազարյանի  
ծննդյան 50 ամյակը**



ՀՀ սահմանադրական դատարանը, աշխատակազմը և ՍԳ տեղեկագրի խմբագրական խորհուրդը շնորհավորում են Հրանտ Նազարյանին ծննդյան 50-ամյակի կապակցությամբ, մաղթում քաջամտ շողջություն, երջանկություն, երազանքների իրականացում, հաջողություններ սահմանադրական արդարադատության իրականացման և իրավագիտության բնագավառում:

**Մարտի 9-ին** ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը հանդիպեց «Իրավական համակարգի ամրապնդման համար խորհրդատվություն» (GTZ, Գերմանիա) ծրագրի պատվիրակության հետ: Հանդիպմանը մասնակցեցին պատվիրակության ղեկավար պրն. դոկտոր Լոթար Յանը,


Գերմանիայի Հեսսեն դաշնային երկրամասի Գերագույն վարչական դատարանի նախագահ պրն. Վոլֆգանգ Ռայմերս, պրն. Օլիվեր Ֆալկը (ԳՏՀԸ «Իրավական համակարգի ամրապնդման համար խորհրդատվություն» ծրագրի իրականացման վերահսկողություն), ԳՏՀԸ տարածաշրջանային իրա-

վական ծրագրի ղեկավար պրն. Յենո Ռայխենբեխերը, ԳՏՀԸ «Իրավական համակարգի ամրապնդման համար խորհրդատվություն» ծրագրի համակարգող պրն. Վարդան Պողոսյանը: Հանդիպման ընթացքում ամփոփվեցին 2008թ. սահմանադրական դատարանի եւ GTZ-ի համագործակցության ծրագրերի արդյունքները եւ քննարկվե-

ցին 2009թ. համագործակցության զարգացման առաջարկությունները եւ ապագա միջոցառումները: ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը եւ պատվիրակության անդամները բարձր գնահատեցին իրականացված համատեղ ծրագրերի արդյունքները:

---

Մայիսի 25-ին լրացավ ՀՀ ՍԴ անդամ Զինավոր Ղուկասյանի ծննդյան 70 ամյակը



ՀՀ սահմանադրական դատարանը, աշխատակազմը և ՍԴ տեղեկագրի խմբագրական խորհուրդը շնորհավորում են Զինավոր Ղուկասյանին ծննդյան 70-ամյակի կապակցությամբ, մաղթում քաջամողջություն, ընտանեկան երջանկություն, արևշատություն, հաջողություն, երկար տարիների կյանք և ամենայն բարիք:

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության  
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝  
Երևան Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 58-81-71  
E-mail: armlaw@concourt.am.  
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 22.05.2009 թ.  
Դասիչ՝ 77754  
Գրաչափը՝ 70x100 1/16  
Տպաքանակը՝ 500

*ՀՀ ՄԳ փեդեկագիրը ՀՀ  
քարչրագույն որակավորման  
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է  
ստենախոսությունների արդյունքների  
փաթեթման համար ընդունելի  
պարբերականների ցանկում*